

Handwritten marginal notes in Armenian script.

Main body of handwritten Armenian text in a cursive script, likely a liturgical or synaxarion text. Includes several lines of red ink used for headings or initials.

Decorative elements at the bottom of the page, including a central floral ornament and a small number '۱۰۸'.

Մայրիկս

YEREVAN STATE UNIVERSITY
FACULTY OF ORIENTAL STUDIES

ARMAN AKOPIAN

CLASSICAL SYRIAC



YEREVAN 2005

44
Կ-17

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՍԱՍՏԱՐԱՆ
ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ

ԱՐՄԱՆ ՀԱԿՈՒՅԱՆ

ԴԱՍԱԿԱՆ ԱՍՈՐԵՐԵՆ

3599



ԵՐԵՎԱՆ 2005

Հրատարակվում է Երևանի պետական համալսարանի
 արևելագիտության ֆակուլտետի խորհրդի որոշմամբ

Հաստատված է ՀՀ կրթության և գիտության նախարարության կողմից
 որպես դասագիրք բարձրագույն ուսումնական հաստատությունների համար

ԱՋԱԿՑՈՒԹՅԱՄԲ՝



ՅՈՒՆԵՍԿՕ-Ի ԳՈՐԾԵՐՈՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ
 ARMENIAN NATIONAL COMMISSION FOR UNESCO

Հակոբյան Ա.
 ԴԱՍԱԿԱՆ ԱՍՈՐԵՐԵՆԷ: - Եր.: Չանգակ-97, 2005, - 492 էջ:

Ա. Հակոբյանի «Դասական ասորերենը» Մերձավոր Արևելքի հնագույն և քրիստոնեության կա-
 րևորագույն լեզուներից մեկին նվիրված առաջին իսկապես դասագիրքն է: Այն բաղկացած է ներածա-
 կան ութ և հիմնական քառասուն դասերից, որոնք մատուցում են լեզվի հիմնական քերականությունն ու
 առավել գործածելի բառապաշարը, պարունակում են հարուստ ու բազմազան ընթերցանյութ և լեզվա-
 կան հնտությունները զարգացնող ու ամրազրոլ վարժություններ: Դասագիրքը պարունակում է նաև զա-
 նազան ոճի ու բարդության տեքստերից կազմված ընդարձակ ընթերցարան, հավելված, քերականական
 աղյուսակներ, ասորերեն-հայերեն և հայ-ասորերեն բառարաններ, ինչպես նաև ասորերենի և արամեա-
 կան այլ բարբառների պատմության բովանդակային ակնարկ: Նախաբանում զետեղված են մեթոդաբա-
 ցական բնույթի պարզաբանումներ ու խորհուրդներ:

Դասագիրքը հասցեագրված է բուհերի արևելագիտական, պատմական, աստվածաբանական
 ֆակուլտետների, հոգևոր ուսումնական հաստատությունների ուսանողներին, սեմագիտությանը զբաղ-
 վող լեզվաբաններին, ինչպես նաև պատմաբաններին, աստվածաբաններին, հոգևորականներին և դա-
 սական ասորերենով հետաքրքրվող այլոց: Դասագիրքը կարող է օգտագործվել ասորերենն ինքնուրույն
 ուսումնասիրելու համար:

ԳՄԴ 81.2 Ասորերեն y 73

4602020000 — 2005
 0003(01)-2005

ISBN 99941-1-087-x

© Հակոբյան Ա.
 © «Չանգակ-97»

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Նախաբան	10
Ասորերենի պատմության համառոտ ակնարկ	15
Ներածական մաս	
Դաս Ա	40
Ընդհանուր տեղեկություններ ասորական գրի մասին	
Դաս Բ	42
Չայնավորներ և ծայնանիչներ (զկաֆա, ովասա) – Բաղաձայններ (ալաֆ, բեթ, զամալ, դա- լաթ)	
Դաս Գ	47
Չայնանիչներ (պտախա, ըսասա) – Շեշտադրում – Բաղաձայններ (հե, ուաու, զայն)	
Դաս Դ	52
Չայնանիչներ (խվասա) – Բաղաձայններ (խեթ, տեթ, յոդ)	
Դաս Ե	56
«Շվա» հնչյունը – Բաղաձայններ (քաֆ, լամադ, մեմ, նուն)	
Դաս Ջ	62
Բաղաձայններ (սեմքաթ, է, պե, սադե)	
Դաս Զ	67
Բաղաձայններ (կոֆ, ոեշ, շին, քաու)	
Դաս Ը	72
Ամփոփում և լրացուցիչ ծանոթություններ	
Հիմնական դասընթաց	
Դաս 1	78
Ասորերենի խոսքի մասերը – Հասկացություն «վիճակի» մասին – Սեռը – Գոյական անվան սեռը – Ածական անվան սեռը – օ կցական շաղկապը – Պատկանելության արտահայտումը	

Ղաս 2	83
Գոյականների թիվը – Ածականների թիվը – «Այս» ցուցական դերանունը – Հ կցական նախդիրը	
Ղաս 3	88
Անձնական դերանուններ – Ղերանվանական վերջադարձներ – Ղերանվանական վերջադարձները հարցական և ցուցական դերանունների հետ – ՀՃ ժխտական մասնիկը – Ածականների բացարձակ վիճակը – ջ կցական մասնիկը որպես հարաբերական դերանուն	
Ղաս 4	96
Ղերանվանական վերջածանցներ – Ղերանվանական վերջածանցները կցական նախդիրների հետ – Հ կցական նախդիրը – «Ունենալ» բայի իմաստի արտահայտում – «Այն» ցուցական դերանունը	
Ղաս 5	102
Ստացական դերանուններ – Ղերանվանական վերջածանցների կցման հատուկ ձևեր – Ղերանվանական վերջածանցների կցումն անջատ նախդիրներին – Պ բառը – Ածականների համեմատության աստիճանները – Միայն հոգնակիով գործածվող գոյականներ – Հ մասնիկը	
Ղաս 6	110
Ատորենի բայական համակարգը: Բայական արմատներն ու դրանց տեսակները – Բայական կառույցներ – ՂԸԱԼ կառույցը – ՂԸԱԼ կառույցի բայերի ենթակայական դերբայը – ՂԸԱԼ կառույցի բայերի ներկա ժամանակը – Ուղիղ խնդրի արտահայտումը	
Ղաս 7	118
ՂԸԱԼ կառույցի բայերի անորոշ դերբայը – Երրորդ թույլ արմատականով բայերը ՂԸԱԼ կառույցում – Հոգնակի թվին կցվող դերանվանական վերջածանցներ – Ածականները մակբայների դերում	
Ղաս 8	125
Ու- բայերը ՂԸԱԼ կառույցում – Ի- բայերը ՂԸԱԼ կառույցում	
Ղաս 9	130
Գոյականների բացարձակ վիճակը – Գոյականների բացարձակ վիճակի գործածությունը – Ղերանվանական նախանշում	
Ղաս 10	135
Ու-ի բայերը ՂԸԱԼ կառույցում – Հարակատար դերբայներ	
Ղաս 11	141
Անցյալ կատարյալ ժամանակ – Ի-ի բայերն անցյալ ժամանակում	
Ղաս 12	146
Ու- խմբի բայերն անցյալ ժամանակում – Խ բառը – Շարահյուսական ժանրություններ – Հ մասնիկը	

Ղաս 13	151
Ու- խմբի բայերն անցյալ ժամանակում – Ու-ի խմբի բայերն անցյալ ժամանակում	
Ղաս 14	155
Ի- խմբի բայերն անցյալ ժամանակում – Անցյալ ժամանակի բայական վերջադարձներ – Բայական վերջադարձները ՀՂ և ՀՃ բառերի հետ – Անցյալ շարունակական ժամանակ	
Ղաս 15	161
Բացարձակ վիճակի գոյականների հոգնակի թիվը – Քանակական թվականներ – Երկրորդական գործողության նշում չ բառի միջոցով	
Ղաս 16	166
ՂԸԱԼ կառույցի անկատար կերպը (ապառնի ժամանակ) – Անկատար կերպի այլ գործածությունները – Իզական սեռի գոյականների հետ գործածվող թվականները – ԽՂ բառի գործածությունը	
Ղաս 17	172
Ու- խմբի բայերն ապառնի ժամանակում – Երկրորդ տասնյակի քանակական թվականները – Մակբայների կազմություն ՀՂ վերջածանցի միջոցով	
Ղաս 18	176
Ի-ի խմբի բայերն ապառնի ժամանակում – Ի- խմբի բայերն ապառնի ժամանակում – ՂԻ բայը – Ղերանվանական վերջածանցների կցումը թվականներին	
Ղաս 19	181
Ի- խմբի բայերն ապառնի ժամանակում – Երկրորդ տասնյակի քանակական թվականները – Ուղիղ խոսքի նշում	
Ղաս 20	187
Ու- խմբի բայերն ապառնի ժամանակում – Ու-ի խմբի բայերն ապառնի ժամանակում – ՂԸԱԼ կառույցի բայերի հրամայական եղանակը – Ու- բայերի հրամայական եղանակը – Ի- բայերի հրամայական եղանակը – Հրամայական եղանակի անկանոն ձևեր – Ղերանվանական ետնշում	
Ղաս 21	193
ՂԱԼ կառույցը – ՂԱԼ կառույցի բայերի ենթակայական դերբայն ու դրանով կազմվող ժամանակաձևերը – Ամբողջական բայերի հատուկ ձևեր ՂԱԼ կառույցում – Թույլ բայերը ՂԱԼ կառույցում – Ղասական թվականներ	
Ղաս 22	200
ՂԱԼ կառույցի բայերի անցյալ ժամանակը – Խ բառի գործածության առանձնահատկությունները – Տասնյակներ նշող և այլ թվականներ	
Ղաս 23	205
ՂԱԼ կառույցի բայերի ապառնի ժամանակը – ՂԱԼ կառույցի բայերի հրամայական եղանակը	

Դաս 24	210
Քառատառ բայեր – Դերանվանական վերջածանցների գործածությունը բայերի հետ	
Դաս 25	216
Կրկնավորված բայեր (III=II) – Դերանվանական վերջածանցները ՊԸԱԼ կառույցի անցյալ ժամանակի հոգնակի թվի բայերի հետ	
Լրացուցիչ ընթերցանյութ	221
Դաս 26	223
ԱՖԷԼ կառույցը – ԱՖԷԼ կառույցի բայերի դերբայական ձևերը – Ամբողջական բայերի հատուկ ձևեր ԱՖԷԼ կառույցում – Թույլ բայերն ԱՖԷԼ կառույցում – Կապակցված վիճակ	
Դաս 27	231
ԱՖԷԼ կառույցի բայերի անցյալ ժամանակը – Դերանվանական վերջածանցները ՊԸԱԼ կառույցի ապառնի ժամանակի բայերի հետ – Բացարձակ անորոշ դերբայ	
Դաս 28	236
ԱՖԷԼ կառույցի բայերի ապառնի ժամանակը – ԱՖԷԼ կառույցի բայերի հրամայական եղանակը – Լս. բայը – Ածականների կապակցված վիճակը – ՊԱԷԼ և ԱՖԷԼ կառույցի բայերը դերանվանական վերջածանցների հետ	
Դաս 29	244
ԷԹՊԸԷԼ կառույցը – ԷԹՊԸԷԼ կառույցի բայերի դերբայական ձևերը – ԷԹՊԸԷԼ կառույցի հատուկ ձևերը – Թույլ բայերն ԷԹՊԸԷԼ կառույցում	
Դաս 30	249
ԷԹՊԸԷԼ կառույցի բայերի անցյալ ժամանակը – Թվականների կապակցված վիճակն ու այլ ձևերը – ֆ մասնիկը	
Լրացուցիչ ընթերցանյութ	254
Դաս 31	257
ԷԹՊԸԷԼ կառույցի բայերի ապառնի ժամանակը – ԷԹՊԸԷԼ կառույցի բայերի հրամայական եղանակը – Դերանվանական վերջածանցները III- բայերի հետ	
Դաս 32	263
ԷԹՊԱԱԼ կառույցը – ԷԹՊԱԱԼ կառույցի բայերի դերբայական ձևերը – Թույլ բայերն ԷԹՊԱԱԼ կառույցում – Դերանվանական վերջածանցները հրամայական եղանակի բայերի հետ	
Դաս 33	269
ԷԹՊԱԱԼ կառույցի բայերի անցյալ ժամանակը – Դերանվանական վերջածանցների կցումն անորոշ դերբայներից	
Դաս 34	274
ԷԹՊԱԱԼ կառույցի բայերի ապառնի ժամանակը – ԷԹՊԱԱԼ կառույցի բայերի հրամայական եղանակը – Վաղակատար անցյալ ժամանակ	

Դաս 35	280
ԷԹԹԱՖԱԼ կառույցը – ԷԹԹԱՖԱԼ կառույցի բայերի դերբայական ձևերը – Թույլ բայերն ԷԹԹԱՖԱԼ կառույցում – Մոտալուտ գործողության արտահայտում	
Լրացուցիչ ընթերցանյութ	286
Դաս 36	289
ԷԹԹԱՖԱԼ կառույցի բայերի անցյալ ժամանակը – Պայմանական նախադասություններ – Կրկնվող գործողության արտահայտում	
Դաս 37	294
ԷԹԹԱՖԱԼ կառույցի բայերի ապառնի ժամանակը – ԷԹԹԱՖԱԼ կառույցի բայերի հրամայական եղանակը	
Դաս 38	298
Երկակի թույլ արմատներ – Ուղիղ խնդրի արտահայտման արխաիկ ձև	
Դաս 39	302
Բայական այլ կառույցներ – Կրկնվող գործողության արտահայտման նկարագրական ձևեր	
Դաս 40	307
Պատկացություն անվանական հիմքերի մասին – Գոյականակերտ և ածականակերտ ածանցների ամփոփում	
Ընթերցարան	312
Պակված	369
Բայական աղյուսակներ	379
Անորոշ-հայերեն բառարան	390
Պայերեն-ասորերեն բառարան	444
Վարժությունների բանալիներ	472

Հայ-արամեական հարաբերությունները սկիզբ են առնում պատմության անտեսանելի խորքերից: Դրանք միշտ աչքի են ընկել խաղաղ գոյակցությանը ու բարեդրացիությանը, մշակութային ու լեզվական ակտիվ ներգործություններով: Հետուրարտական ժամանակաշրջանից ընդհուպ մինչև հայոց գրեթե գյուտը արամեերենը գործածվել է հայոց արքաների դիվանատններում որպես պաշտոնական գրագրությունների լեզու և մինչ օրս արձագանքում է հայերենում տասնյակ բառերով՝ քահանա, ուրբաթ, կոկորդ, ճրագ, առյուծ, տոնձ, սատանա, միգակ, մաշկ, գանձ և այլն:

Հայերի հետ գրեթե միաժամանակ քրիստոնեություն ընդունելով՝ արամեացիները հրաժարվեցին հեթանոսության հոմանիչ դարձած իրենց հիմնավոր ինքնանվանումից և ընդունեցին նորը՝ «ասորի»: Ընդհանուր կրոնը հոգևոր ամուր կապեր ստեղծեց երկու ժողովուրդների միջև, որոնք պահպանվում են մինչև մեր օրերը: Հենց ասորիներն էին այն ժողովուրդը, որին վիճակվել էր Մեծ եղեռնի օրերին տասնյակ հազարավոր ամենդ գոհերով կիսել հայերի ճակատագիրը:

Թեև առանձին հայ գիտնականներ ժամանակ առ ժամանակ անդրադարձել են ասորական հոգևոր ժառանգությանը, հիմնականում հայ-ասորական առնչությունների կամ Մատենադարանի ասորական ձեռագրերի ուսումնասիրման համատեքստում, այդուհանդերձ, ասորագիտությունը, որպես այդպիսին, մեզանում չի զարգացել և չի վերածվել արևելագիտության ինքնուրույն ճյուղի: Սրա պատճառը, անշուշտ, այն է, որ ասորիները երբեք չի դասավանդվել Հայաստանում, իսկ առանց լեզվի ուսումնասիրման հնարավոր չէ ներթափանցել մի մշակույթի մեջ, որը մեծավ մասամբ խոսքի մշակույթ է: Չափազանցում չի լինի ասել, որ ասորիների հայալեզու դասագիրք ունենալը վաղուց արդեն վերածվել էր հայ արևելագիտության արժանապատվության հարցի: Մնում է հուսալ, որ այն կարողացան իր հետ կապվող ակնկալիքներն ու իրքը կնպաստի հայ արամեագիտության ու ասորագիտության ձևավորմանը:

Ներկայացվող դասագիրքը նախ և առաջ հասցեագրված է բարձրագույն ուսումնական հաստատությունների արևելագիտության ֆակուլտետների ուսանողներին և նախատեսված է ուսումնական մեկ տարվա համար: Այն քաղկեցած է ներածականից, որում մատուցվում են ասորական գիրը, ընթերցանության ու արտասանության կանոնները, և քառասուն դասից քաղկեցած հիմնական ուսումնական մասից: Ենթադրվում է, որ ներածական մասն ու առաջին քսան դասն ուսանողները կտրացանեն առաջին, իսկ հաջորդ քսան դասն ու լրացուցիչ ընթերցանությունը՝ երկրորդ կիսամյակի ընթացքում:

Քերականական նյութը ջանացել ենք մատուցել հակիրճ, մատչելի լեզվով՝ օգտագործելով միջմակարդ դպրոցի ծրագրից ծանր տեքստները: Քերականական նյու-

թը չարտադրող պարբերություններն ու ասորական տեքստի նախադասությունները ուսանողի ու դասախոսի հարմարության համար համարակալված են: Ասորական տեքստերը պարունակում են տառերով նշված տողատակեր, որոնք հղում են համապատասխան քերականական նյութը պարունակող պարբերությանը: Մա արված է, որպեսզի ուսանողը պարբերաբար անդրադառնա անցած քերականական նյութին, բարձրագույն այն հիշողության մեջ և նոր օրինակների օգնությամբ ավելի լավ յուրացնի և ամրագրի:

Հայտնի է, որ քերականական կանոնները յուրացվում են ոչ այնքան բացատրությամբ, որքան օրինակներով: Ուստի փորձել ենք հնարավորինս շատացնել դրանց քիվի՝ օրինակների մեջ ընդգրկելով տվյալ դասի նոր բառերն ու բառակապակցությունները: Պետք է նկատի ունենալ, որ նոր բառերն ավելի հեշտ են ընկալվում, հիշվում ու յուրացվում քառակապակցության կամ կարճ նախադասության մեջ, քան առանձին վերջրած ցուցակի տեսքով:

Ուսումնական մասի, հատկապես՝ վերջին քսան դասերի լեզվանյութի մեծ մասը գրեթե առանց փոփոխությունների վերցված է Նոր Կտակարանի ասորական բարձրագույնությունից, որը մեծապես ազդել է գրական ասորիների ընդհանուր ոճի ձևավորման վրա: Լեզվանյութի մյուս մասը վերցված է առականներից, հեթանոսներից, ինչպես նաև միջնադարի ասորի նշանավոր հեղինակ Գրիգոր Բար Էվրայայի (Աբուլ-Ֆարաջ) «Ձվարճակի պատմվածքների գրքից»: Մի քանի տարրական տեքստեր վերցված են Արդև-Մասիի Կարարաչիի «Ընթերցանության դասեր» ձեռնարկից:

25-րդ, 30-րդ ու 35-րդ դասերը հետո տրված է լրացուցիչ ընթերցանություն, որը խորհուրդ է տրվում քաջ չորդնել: 35-րդ դասից հետո տրված լրացուցիչ ընթերցանություն ընդգրկում է Տերունական աղոթքն ու «Հավատամքը», որոնք ցանկալի է անգիր աստվորել:

Քանի որ դասական ասորիները «մեռած» լեզու է, և ուսումնասիրողների համար դրանով հարդորակցվելու քիչ հավանականություն կա, դասագրքում նախատեսված չեն խոսակցական հմտությունների զարգացմանը նպաստակատարված վարժություններ: Նվազագույնի են հասցված նաև մեխանիկական բնույթի վարժությունները, որոնցից ուսանողները, որպես կանոն, խույս են տալիս: Դրանց փոխարեն մեծ թիվ են կազմում բարձրագույնության համար տրվող հայերեն նախադասությունները, քանի որ բարձրագույնությունը լավագույն և ուսանողի կողմից առավել սիրված վարժությունն է, որը հնարավորություն է տալիս զբաղվել ակտիվ լեզվակառուցմամբ, ենթագիտակցության մեջ ամրագրել կուտակվող քերականական գիտելիքներն ու բառապաշարը:

Թարգմանական վարժությունները պետք է կատարվեն և՛ որպես տեսային գրավոր աշխատանք, և՛ բանավոր՝ լսարանում: Վերջին դեպքում դասախոսը ուսանողին կարող է առաջարկել որոշ փոփոխություններ կատարել բարձրագույն նախադասության մեջ, օրինակ՝ փոխել ենթակայի սեռը կամ թիվը, բայի ժամանակը և այլն: Ելնելով նախադասության իմաստից՝ դասախոսը կարող է հարցեր տալ՝ ներգրավելով ուսանողին խոսակցության մեջ: Ներողամտություն ենք ակնկալում հայերենի նախանձախնդիրներից բարձրագույնության համար տրվող հայերեն նախադասությունների շարակուսական, իմաստային և ոճական որոշ աղավաղումների համար, որոնք թույլ են տրվել բարձրագույնությունը հեշտացնելու և ասորիների ճիշտ շարահյուսությունը հուշելու համար:

Ինչպես արդեն նշվեց, լեզվանյութի զգալի մասը վերցված է Նոր Կտակարանից, որի արդյունքում կրոնական բեմատիկան թափանցել է նաև բարձրագույնությունների

համար տրվող վարժությունների մեջ: Հուսով ենք, որ սա չի դիտվի որպես կրոնական անտեղի քարոզչություն և ուսնձգություն կրթության աշխարհիկ էության նկատմամբ:

Արժև ևս մեկ անգամ շեշտել, որ ներկայացվող դասագիրքը նախ և առաջ բուհական ձեռնարկ է, որը ենթադրում է դասախոսի՝ այս կամ այն չափով ներգրավվածություն: Այնուամենայնիվ, մեր կողմից արվել է ամեն հնարավորը, որպեսզի դասագիրքը կարողանա մաս որպես ինքնուսույց ծառայել ասորերենով հետաքրքրվող պատմաբաններին, լեզվաբաններին, աստվածաբաններին, հոգևորականներին, հայաստանաբանակ ասորիներին, որոնց թիվը, անշուշտ, կգերազանցի արևելագետ ուսանողների թվին: Այդ իսկ պատճառով դասագիրքը չի ակնկալում ծանոթություն սեմական այլ լեզուների հետ և, հետևաբար, չի պարունակում համեմատություններ դրանց հետ, ինչը, սակայն, միանգամայն տեղին և ողջունելի է արևելագիտական լսարանի պարագայում, որտեղ ասորերենը, ամենայն հավանականությամբ, կդասավանդվի որպես երկրորդ կամ երրորդ սեմական լեզու:

Ասորերենն ինքնուրույն ուսումնասիրողներին նկատի ունենալով՝ նպատակահարմար ենք գտել հիմնական դասընթացի առաջին քսան դասերում ընդգրկել ասորերենի հայերեն գրադարձությունը (տրանսլիտերացիա), աշխինքն՝ ասորական բառերի գրությունը հայկական տառերով: Պետք է, սակայն, նկատի ունենալ, որ սա գիտական տառադարձություն (տրանսկրիպցիա) չէ, որը մեռած լեզուների պարագայում կարող է կրել լոկ ենթադրական քնույթ:

Այդ նույն պատճառով դասագրքի վերջին դասերում, որոնցում լեզվի բարդության աստիճանն աճում է, տողատակերով նշված է, թե Նոր Կտակարանի (մի բանի դեպքերում՝ նաև Հին Կտակարանի) որ գրքից ու գլխից է վերցված տվյալ պարբերությունը: Առանց դասախոսի օգնության տեքստի ճիշտ ըմբռնումն ու բարգձմանությունը կարող է զգալի դժվարություններ առաջացնել, հատկապես Աստվածաշնչի ոճական առանձնահատկություններից անտեղյակ մարդու համար: Նման դեպքերում ասորերենն ինքնուրույն ուսումնասիրողը, որպես վերջին միջոց, կարող է դիմել հայերեն կամ որևէ այլ լեզվով թարգմանության օգնությանը:

Դասագրքի վերջում զետեղված են նաև առաջին տասը դասերի վարժությունների բանալիները, որոնք կոչված են օգնելու ուսանողին հաղթահարել լեզվի ուսումնասիրության առավել դժվար՝ սկզբնական փուլը:

Դասագիրքը պարունակում է ընթերցարան, որը կազմված է զանազան ծավալի, ոճի ու բարդության տեքստերից՝ բարգձմանություններից ու բուն ասորական գրականության մտուշներից. վերջինների թվում է Մծրինի բարձրագույն դպրոցի համրահայտ կանոնադրությունը: Ընթերցարանի տեքստերի մի մասը տրված է ձայնանիշերով, մյուսը՝ առանց ձայնանիշերի: Ընթերցարանի ողջ բառապաշարն ընդգրկված է դասագրքի ասորերեն-հայերեն բառարանում:

Ասորական գիրն ունի երեք տառատեսակ՝ *Էսորանգելո, սերտո և նեստորյան*: Որպես դասագրքի նախնական տառատեսակ ընտրվել է սերտոն, որն ամենատարածվածն է գիտական ձեռնարկներում և, բացի դրանից, ամենահեշտն է սկսնակների համար՝ չնորմալ ձայնավորման իր պարզ համակարգի: Հիմնական ուսումնական մասի կեսից ներմուծվում են նաև մյուս երկու տառատեսակները: Ուսանողը պետք է նկատի ունենա, որ ասորերենի լիարժեք տիրապետումը ենթադրում է հավասար ծանոթություն բոլոր երեք տառատեսակների հետ: Էսորանգելո և նեստորյան տառատեսակներին

«Վավերված» բաժնում նվիրված են առանձին գլուխներ, որոնց հետ անհրաժեշտ է ծանոթանալ, երբ համապատասխան տառատեսակը կհանդիպի առաջին անգամ:

Գեոևս վաղ միջնադարից ասորերենն ունեցել է արտասանաողղագրական երկու տարբերակ՝ արևելյան (ճեստորական) և արևմտյան (հակոբիկյան), որոնց միջև տարբերություններն աննշան են: Այդ իսկ պատճառով դասագիրքը չի հետևում հատկապես դրանցից որևէ մեկին և երկուսն էլ մատուցում է, թեև որոշ նախապատվություն տրված է արևելյանին, որն ավելի ճիշտ է վերարտադրում դասական ասորերենի հիմքում ընկած Եղևիսիայի արամեական բարբառը:

Ասորիների՝ հարյուրամյակներ շարունակվող կրոնահամայնքային պառակտվածությունը հանգեցրել է այն բանին, որ դասական ասորերենը, ծնունդ տալով հայտնաբերում և թագմաբնույթ գրականությանը, այդպես էլ չունեցավ ուղղագրական, կետադրական ու ձայնավորման միասնական ստանդարտ, նույնիսկ միևնույն տառատեսակի ասանաններում: Մույն դասագրքին հրաժեշտ տված ու ասորական գրականության օվկիան ինքնուրույն նավարկության դուրս եկած ուսանողը պետք է պատրաստ լինի հանդիպելու ծանոթ բառերի, հիմնականում՝ փոխառությունների գրության այլ ձևերի և:

Դասագիրքը պարունակում է նաև ասորերենի պատմության համառոտ ակնարկ, բայական աղյուսակներ, ինչպես նաև ասորերեն-հայերեն ու հայերեն-ասորերեն բառարաններ: Յուրաքանչյուր բառարան պարունակում է ավելի քան երեք հազար բառ, ընդ որում՝ այնպիսիք, որոնք չեն հանդիպում դասագրքում, սակայն կարող են դասվել առավել գործածելի բառերի ցանկը: Ասորերեն-հայերեն բառարանը պարունակում է Նոր Կտակարանի գրեթե ողջ բառապաշարը՝ բացառությամբ հազվագյուտ բառերի ու հատուկ անունների:

Մենք, անշուշտ, գիտակցում ենք, որ դասագիրքը զերծ չէ թերություններից ու բացթողումներից և կանխավ մեր երախտագիտությունն ենք հայտնում նրանց, ովքեր կհայտնեն իրենց դիտողություններն ու առաջարկները:

* * *

Խորին երախտագիտություն ենք հայտնում ՅՈՒՆԵՍԿՕ-ի գործերով Հայաստանի ազգային հանձնաժողովին՝ դասագրքի հրատարակմանը ցուցաբերած աջակցության և հովանավորության համար:

Երախտագիտություն ենք հայտնում նաև Ասորի ուղղափառ եկեղեցու արևելյան ԱԱՆ բեմի առաջնորդ, արքեպիսկոպոս Մոռ Կիրիկ Ալբրեմ Զարիմին՝ դասագրքի հրատարակմանը աջակցելու համար:

Արման ՀԱԿՈՐՅԱՆ

Երևան, 2005թ., հոկտեմբեր

Ստորև բերված գրականության ցանկը կարող է օգտակար լինել նրանց, ովքեր կցանկանան ծանոթանալ դասական ասորերենին, ասորական մշակույթին ու հայ-ասորական առնչություններին նվիրված այլ աշխատություններին:

Դասագրքեր և քերականական ձեռնարկներ

- Carl Brockelmann, *Syrische Grammatik*, Leipzig, 1955.
J. F. Coakley, *Robinson's Paradigms and Exercises in Syriac Grammar*, Oxford University Press, 2002.
L. Costaz, *Grammaire Syriaque*, Beyrouth, 1955.
Tsunetsugu Muraoka, *Classical Syriac: A Basic Grammar with a Chrestomathy*, Harrassowitz Verlag, 1997.
Eberhard Nestle, *Syriac Grammar with Bibliography, Chrestomathy and Glossary*, Wipf & Stock Publishers, 2002.
Theodor Nöldeke, *Kurzgefasste Syrische Grammatik*, Leipzig, 1898, *նույնը անգլերեն՝*
Theodor Nöldeke, *Compendious Syriac Grammar*, Wipf & Stock Publishers, 2003.
J.B. Segal, *The Diacritical Point and Accents in Syriac*, Gorgias Press, 2003.
Wheeler Tackston, *Introduction to Syriac*, IBEX Publishers, 1999.
Arthur Ungnad, *Syrische Grammatik mit Übungsbuch*, München, 1932.
К.Г. Церетели, *Сирійский язык*, “Языки народов Азии и Африки”, Москва, 1979.

Բառարաններ

- M. A. William Jennings, *Lexicon to the Syriac New Testament*, Wipf & Stock Publishers, 2001.
George Anton Kiraz, *Lexical Tools to the Syriac New Testament*, Gorgias Press, 2002.
Payne Smith, *Compendious Syriac Dictionary*, Wipf & Stock Publishers, 1999.

Ասորական գրականություն ու մշակույթ

- Aphram I. Barsoum, *History of Syriac Literature and Sciences*, Gorgias Press, 2003.
Seely Beggiani, *Introduction to Eastern Christian Spirituality: The Syriac Tradition*, University of Scranton Press, 1991.
De Lacy O'Leary, *The Syriac Church and Fathers*, Gorgias Press, 2002.
William Hatch, *An Album of Dated Syriac Manuscripts*, Gorgias Press, 2002.
William Wright, *A Short History of Syriac Literature*, Gorgias Press, 2001.
Н. В. Пигулевская, *Культура сирійцев в средние века*, Москва, 1979.

Հայ-ասորական առնչություններ

- Մելրոյան Հ.Գ., *Հայ-ասորական հարաբերությունների պատմությունից (III-V դդ.)*, Երևան, 1970:
Տիր-Մինասյանց Ե., *Հայոց եկեղեցույ յարաբերությունները ասորոց եկեղեցիների հետ*, Էջմիածին, 1908:
Тер-Петросян Л. А., *Древнеармянская переводная литература*, Ереван, 1984.



ԱՍՈՐԵՐԵՆԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՌՈՏ ԱՆԿԱՐԿ

ՄԵՍԱԿԱՆ ԼԵՁՈՒՆԵՐ: Ասորերենը (Syriac language, langue syriaque, Syrische Sprache, сирійский язык) պատկանում է սեմա-քամյան լեզվաընտանիքի սեմական խմբին: «Սեմա-քամյան» տերմինն առաջարկել է գերմանացի հանրահայտ լեզվաբան Կարլ Ռիխարդ Լեպսիուսը 1860 թվականին՝ հենվելով աստվածաշչյան ավանդության վրա, որը Նոյ նահապետի որդիներ Սեմին ու Քամին նշում է որպես համապատասխանաբար ասիական ու աֆրիկյան ժողովուրդների նախահայրերի: Թեև այս տերմինն այնքան էլ ճիշտ չի արտահայտում լեզվաընտանիքի խմբերի քանակը, որոնք առնվազն չորսն են («քամյան» կոչվող խումբն իրականում բաղկացած է երեք լեզվական խմբերից՝ քուշական, բերբերական և չադական), այնուամենայնիվ, այն մնում է լեզվաընտանիքի ամենատարածված անվանումը:

1950 թվականին աներիկյան լեզվաբան Ջոզեֆ Գրինբերգն առաջարկեց լեզվաընտանիքը կոչել «աֆրո-ասիական»: Այս տերմինը չամրագրվեց, քանի որ այն տպավորություն էր ստեղծում, թե Աֆրիկայի ու Ասիայի բոլոր լեզուները պատկանում են այդ լեզվաընտանիքին: Ավելի ուշ ռուս լեզվաբան Իգոր Դյակոնովը վերածնեց Գրինբերգի տերմինը որպես «աֆրասիական»՝ նկատի ունենալով, որ լեզվաընտանիքի լեզուների մի մասը տարածված է Աֆրիկայում, մյուսը՝ Ասիայում: Դյակոնովի տարբերակն ավելի լայն ճանաչում ստացավ և գրեթե հավասարապես գործածվում է «սեմա-քամյան» տերմինի հետ մեկտեղ:

Սեմական լեզուները, որոնց ընդհանուր մայր նախալեզուն ենթադրաբար տարածված է եղել Արաբական թերակղզում, իրենց հերթին բաժանվում են երեք ենթախմբի՝ հյուսիսարևելյան, հյուսիսարևմտյան և հարավային:

Հյուսիսարևելյան (այլ դասակարգմամբ՝ հյուսիս-եզրային) ենթախմբին պատկանում է սեմական հայտնի լեզուներից հնագույնը՝ սեպակիր **աքքադերենը**, որը եղել է Բաբելոնի քաղաքության և Ասորեստանի խոսակցական ու գրավոր լեզուն և համապատասխանաբար բաժանված է եղել ասորեստանյան և քարեղյան բարբառների: Այս ենթախմբին սովորաբար դասում են նաև էրլայերենը, որն իր անվանումն ստացել է

Էրլա քաղաքից, ուր և հիմնականում հայտնաբերվել են այդ լեզվի գրածոները¹: Այս ենթախմբի լեզուներից ոչ մեկը չի բողբել կենդանի ժառանգներ:

Հյուսիսարևմտյան (այլ դասակարգմամբ՝ հյուսիս-կենտրոնական) ենթախմբին պատկանում են քանաանական² լեզուները՝ բուն քանաաներենը և դրանից գրեթե չտարբերվող փյունիկերենը, վերջինիս տարրերակ՝ Կարթագենի պունիկերենը, քանաաներենի շառավիղ հանդիսացող եբրայերենը, ինչպես նաև այսօրվա Հորդանանի տարածքում մ.թ.ա. I հազարամյակի սկզբում տարածված մոավերենը, ամոնիերենն ու եռոմերենը: Փյունիկյան ու Քանաանը, որոնք սովորաբար դիտվում են որպես մեկ երկրամաս, մարդկությանը հայտնի ամենաին տառային գրի բնօրրանն են: Այս գիրը, որը հայտնի է որպես «փյունիկյան», իսկ գիտական գրականության մեջ կոչվում է նաև «արևմտասեմական», ընկած է մինչև այսօր գործածվող բազմաթիվ գրերի հիմքում:

Քանաանական լեզուների հետ ընդհանրություններ ունեն և հաճախ դրանց խմբին են դասվում նույնպես մեր թվարկությունից առաջ Սիրիայի հյուսիսում տարածված ուգարիթերենը և Միջագետքում ու դրանից դուրս տարածված ամորերենը:


Հյուսիսարևմտյան ենթախմբի մյուս ճյուղը կազմում են բազմաթիվ արամեական բարբառները, որոնց մասին խոսք կգնա ստորև:

Հյուսիսարևմտյան ենթախմբի կենդանի ժառանգներն են Իսրայելի պետական լեզուն՝ արդի եբրայերենը, ինչպես նաև սեմական լեզուներին բնորոշ հատկանիշների զգալի մասը կորցրած արամեական երեք բարբառները, որոնց մասին նա խոսք կգնա ստորև:

Սեմական լեզուների հարավային ենթախմբին պատկանում են Եթովպիայի միջնադարյան գրական լեզուն՝ գեեզը, Եթովպիայի այսօրվա պետական լեզուն՝ ամհարերենը, Էրիթրեայի պետական լեզուն՝ տիգրինյան, այս երկու երկրներում տարածված ևս մի քանի լեզուներ³, ինչպես նաև արաբերենն իր բոլոր տարատեսակներով, այն է՝ հնագույն ժամանակներում Հարավային Արաբիայում տարածված, այսպես կոչված, «հարավ-արաբական» լեզուները՝ սաբայերենը, մինայերենը, դասական արաբերենը, որի հիման վրա գարգացել է արդի գրական արաբերենը, արաբական բարբառները, այդ թվում՝ ինքնուրույն լեզվի վերածած լատինատառ մալթայերենը, որը մոտ է Թունիսի բարբառին: Նշված բոլոր լեզուները, բացառությամբ գեեզի ու «հարավ-արաբական» լեզուների, կենդանի են:

Հյուսիս-եզրային ու հյուսիս-կենտրոնական տերմինների կողմնակիցները նույն սկզբունքով բաժանում են նաև հարավային ենթախմբը: Այսպես՝ արաբերենը դասվում է հարավ-կենտրոնական ենթախմբի մեջ, իսկ եթովպական լեզուները՝ հարավ-եզրային: Այսպիսի դասակարգման տրամաբանության համաձայն՝ «կենտրոնական» կոչվող լեզուները, այսինքն՝ արաբերենը, արամեերենն ու քանաանական լեզուներն ավելի մեծ թվով ընդհանրություններ ունեն միմյանց հետ և ենթադրաբար ավելի լավ են պահպանել նախասեմական մայր լեզվի առանձնահատկությունները, քան «եզրային» լեզուները՝ աքքադերենը, էրլայերենն ու եթովպական լեզուները: Այս դասակարգման բոլոր կողմն այն է, որ գեեզը շատ մեծ ընդհանրություններ ունի դասական արաբերենի հետ և

դրա հետ ակնհայտորեն պատկանում է նույն ենթախմբին: Չի բացառվում, որ գեեզը սերում է հարավ-արաբական լեզուներից մեկից կամ դրանց հետ մեկտեղ առանձնացել է ընդհանուր նախալեզվից: Համեմայն դեպք, եթովպական գիրն ակնհայտորեն սերում է հնագույն հարավ-արաբական գրերից:



ԱՐԱՄԵՐԵՆ ՈՒ ԴՐԱ ԲԱՐԲԱՆՆԵՐԸ: Արամեացիները բացառիկ դեր են խաղացել հին Մերձավոր Արևելքի լեզվաբանության կյանքում: Նրանք երբեք չեն ունեցել քաղաքական մեծ կշիռ, չեն ստեղծել քիչ թե շատ աչքի ընկնող միասնական պետություն, բաժանված են եղել քոչվոր ու կիսաքոչվոր առանձին ցեղերի, իրար դեմ պայքարող կրոնական համայնքների: Սակայն նրանց լեզվին վիճակված էր դառնալ Հին աշխարհի ամենանշանավոր լեզուներից մեկը՝ նույն շարքում կանգնելով լատիներենի, հունարենի ու արաբերենի հետ: Գրեթե մեկուկես հազարամյակ արամեերենը Մերձավոր Արևելքի ազգամիջյան ու միջազգային հաղորդակցության լեզուն էր՝ կատարելով այն նույն դերը, որը միջնադարում կատարում էր լատիներենը, իսկ նորագույն ժամանակներում՝ անգլերենը:

Արամեացիների հնագույն պատմությունը հայտնի է Հին Արևելքի գրավոր հուշարձաններից ու հնագիտական պեղումների տվյալներից: Մյնչև մ.թ.ա. II հազարամյակի կեսը նրանք զբաղեցնում էին Արարական թերակղզու հյուսիսարևելյան հատվածը, որտեղից այնուհետև շարժվում են դեպի հյուսիս-արևմուտք և աստիճանաբար հաստատվում Հյուսիսային Միջագետքում, որը Հին Կտակարանում հիշատակվում է որպես «Արամ-Նահարային», այսինքն՝ «երկու գետերի Արամը», և Սիրիայում, որտեղ ստեղծվում են արամեական առաջին քաղաք-պետություններն ու գաճառ բազմակրթությունները: Արամեացիների մի հատվածը, որը հայտնի է քաղղեացիներ անվանմամբ, հաս-

¹ Որոշ լեզվաբաններ էրլայերենը դասում են հյուսիսարևմտյան խմբի մեջ:
² «Քանաանի» այսօրվա Իսրայելի տարածքի հնագույն անվանումն է:
³ Ինչպես և կենդանի արամեական երեք բարբառները, ամհարերենը, տիգրինյան և եթովպական սեմական արդի այլ լեզուները բավականին հեռացել են սեմական լեզուներին բնորոշ բերականական նկարագրից:

տատվում է Միջագետքի հարավում, որտեղ դառնում է քնակչության խոշոր քաղաքը-տարրերից մեկը:

Արամեացիների տարածմանը զուգահեռ տեղի են ունենում նաև այլ ժողովուրդների կամավոր կամ բռնի տեղաշարժեր: Այսպես՝ Միջագետքում բնակվող ամորացիների մի խումբ ինչ-ինչ պատճառներով ստիպված է լինում լքել հայրենիքը և անցնելով Եփրատ գետը՝ շարժվել դեպի Քանաան: Ամորական այս ցեղերը հնագույն արձանագրություններում նշվում են «*իլիֆ*» բառով, որը կապված է «անցնել, հատել» իմաստ ունեցող սեմական արմատի հետ և արտացոլում է պատմական այն փաստը, որ ամորացիները Միջագետքից Քանաան են հասել՝ «անցնելով» Եփրատ գետը: Այսպիսով՝ «*իլիֆ*» բառը փաստորեն նշանակում էր «անդրգետացի»: Հաստատելով իրենց գերիշխանությունը Քանաանում՝ իվրի-ամորացիները յուրացնում են քանաանցիների անհամեմատ ավելի զարգացած մշակույթն ու լեզուն: Քանաանացած այս ամորացիներից սկիզբ են առնում հին եբրայեցիները՝ այսօրվա հրեաների նախնիները:

Պատմական այս իրողությունը խտացված ու առասպելացված կերպով արտացոլվել է Հին Կտակարանում՝ հրեաների նախահայր Աբրահամ նահապետի մասին ավանդապատումների տեսքով: Անսալով իր աներևույթ Աստծու հրամանին՝ Աբրահամ իր տոհմակիցների հետ լքում է իր հարազատ՝ Քաղդեացվոց Ուր քաղաքն ու ուղևորվում դեպի «ավետյաց երկիր» Քանաան: Հետաքրքրական է, որ Հին Կտակարանում Աբրահամը, փաստորեն, արամեացի է համարվում. նրա բոլոր Հակոբը, որից սերել են հրեական տասներկու ցեղերը, Հին Կտակարանում մի տեղ ուղղակիորեն բնութագրվում է որպես «գեղեցիկ արամեացի»:

Հին Կտակարանում Արամ անունը հիշատակվում է նաև մի քանի անգամ: Բացի Արամ-Նահարայիցից, այն հիշատակվում է որպես Սեմի հիմնդրորդ որդու, ինչպես նաև Աբրահամ նահապետի երրորդ անուններ: Թեև տրամաբանական է բովում այս երկրորդ Արամին դիտել որպես արամեացիների նախահայր, ինչպես Աբրահամն է համարվում հրեաներիցը, այնուամենայնիվ, Աստվածաշնչի մեկնաբաններն արամեացիների (ինչպես նաև արաբների և սեմական մի քանի այլ ժողովուրդների) նախահայր են ճանաչում Աբրահամին՝ նրա անվան հետ կապելով նաև սեմական ժողովուրդների միջավայրում ծագած միաստվածական երեք կրոնները՝ հուդայականությունը, քրիստոնեությունն ու իսլամը:

Աստվածաշնչի վկայությունը, քն Աբրահամն ու Արամը հարազատ եղբայրներ են եղել, ևս մեկ անգամ հաստատում է արամեացիների ու ամորացիների ցեղակցական սերտ կապերը: Բացի սրանից, երկու ժողովուրդների ցեղակցությանն է մատնանշում Հին Կտակարանում քանիցս արձանագրված այն փաստը, որ Աբրահամի շառավիղները կին առնելու համար ուղևորվում էին Սիրիայում ու Հյուսիսային Միջագետքում, այսինքն՝ արամեական տարածքներում բնակվող իրենց ազգականների մոտ:

Հին Կտակարանում նկարագրված է նաև Իսրայելի թագավորների՝ Սալուդի, Սողոմոնի ու Դավիթի պայքարը Սիրիայի արամեական թագավորությունների հետ, որոնց անվանումների մեջ ևս առկա է «Արամ» բառը: Գիտական գրականության մեջ այս թագավորությունները երբեմն հավաքականորեն նշվում են որպես «դամասկոսյան Արամ»: Հին Կտակարանը հիշատակում է դամասկոսյան Արամի Աղրազար (Հաղաղեփեր), Ռազոն (Ռեզոն), Հեցիոն, Բեն-Հաղաղ, Ազայել և այլ թագավորներին: Արամեական այս պետական միավորներն ամենայն հավանականությամբ վերջնականապես

կործանվել են Ասորեստանի կողմից մ.թ.ա. VIII դարի վերջին՝ Իսրայելի թագավորության կործանման հետ մեկտեղ:

Իրենց պատմության ողջ ընթացքում արամեացիներին այդպես էլ չհաջողվեց հասնել ազգային միասնության և ստեղծել միասնական պետություն: Հյուսիսային Միջագետքում ու Սիրիայում տարբեր ժամանակաշրջաններում գոյություն ունեցած արամեական պետական միավորներից և ոչ մեկին չհաջողվեց միավորել արամեական բոլոր գեղերին ու նրանց զբաղեցրած տարածքները: Անբողջ Մերձավոր Արևելքով մեկ լեզվական էքսպանսիա կատարելով հանդերձ՝ արամեացիները գրեթե չեն ունեցել սեփական քաղաքական պատմություն:

Ազգային ու պետական միասնականության բացակայությանը է պայմանավորված, որ արամեներենը չունեցավ մեկ միասնական գրական լեզու և հայտնի է մեկ տասնյակի հասնող բարբառների տեսքով, որոնցից շատերը հասել են գրական լեզվի մակարդակի:

Արամեական հնագույն գրածոները հայտնաբերված են Սիրիայի տարածքում և վերագրվում են մ.թ.ա. IX դարին, երբ Սիրիան Ասորեստանի տիրապետության տակ էր: Սրանք հիմնականում արքայական արձանագրություններ են, ինչպես նաև տասպանագրություններ և նվիրագրություններ, որոնց լեզուն կրում է քանաաներենի ազդեցությունը և երբեմն դիտվում որպես միջանկյալ օղակ արամեերենի ու քանաաներենի միջև: Գրածոները կատարված են արևմտասեմական գրով, որն արամեացիները (ինչպես և երրայացիները) փոխ էին առել փյունիկեցիներից ու քանաանցիներից և վերջիններիս պատմական թատերաբեմից դուրս գալուց հետո պահպանել և զարգացրել էին:



Փյունիկա-արամեական (արևմտասեմական) գիրը

Այս ժամանակաշրջանում արամեերենը Հյուսիսային Միջագետքից ու Սիրիայից տարածվում է նաև Ասորեստանի որոշ նահանգներում, մրցակցության մեջ մտնում այստեղ աքքադերենի հետ և, ի վերջո, աքքադերենի կողքին ստանում պետական գրագրության լեզվի կարգավիճակ: Նոր բաբելոնյան թագավորությունում (626-539), որի բնակչության զգալի մասը քաղդեացի-արամեացիներ էին, աքքադերենն արդեն գրեթե ամբողջությամբ զիջել էր իր դիրքերն արամեերենին և գործածվում էր միայն պաշտոնական արձանագրությունների համար: Գրան զուգահեռ՝ արամեերենն աստիճանաբար սկսում է գործել որպես ազգամիջյան հաղորդակցության լեզու:

քյանը հաջորդած ժամանակաշրջանից հրեաների միջավայրում գործածվող և Հին Կտակարանի գրքերում արձանագրված արամեական բարբառի շառավիղն է:

Հրեական կրոնական ստեղծագործություններից մախ և առաջ հարկ է հիշատակել աստվածաշնչյան գրքերի արամեական բարգմանությունները՝ *բարգումները*: Մեզ է հասել երկու բարգում՝ «Օնկելոսի բարգում», որը Մովսեսի Հնգամատյանի՝ Թորայի բարգմանությունն է, և «Հովմաթանի բարգում», որը մարգարեների գրքերի բարգմանությունն է: Արևմտյան բարբառով են գրված նաև հրեական կրոնափիլիսոփայական և իրավագիտական արժեքավոր աշխատության՝ «Երուսաղեմյան Թալմուդի» և Հին Կտակարանի զանազան մեկնաբանությունների՝ «Միդրաշների» զգալի մասը:

Պաղեստինի տարածքում արամեերենի արևմտյան բարբառով խոսում ու ստեղծագործում էին նաև սամարացիները¹: Մրանց մոտ ձևավորվել էր յուրահատուկ մի տառատեսակ, որը կարծես դուրս է մնում արամեական տառատեսակների ընդարձակ ընտանիքից և փյունիկյան գրի զարգացման մեկ այլ ճյուղ է ներկայացնում: Այս գրով է գրված սամարական Թորան, որը մինչ օրս ընթերցվում է սամարացիների ծխակատարությունների ժամանակ:

𐤀 𐤁 𐤂 𐤃 𐤄 𐤅 𐤆 𐤇 𐤈 𐤉 𐤊 𐤋 𐤌 𐤍 𐤎 𐤏 𐤐 𐤑 𐤒 𐤓 𐤔 𐤕 𐤖 𐤗 𐤘 𐤙 𐤚 𐤛 𐤜 𐤝 𐤞 𐤟 𐤠 𐤡 𐤢 𐤣 𐤤 𐤥 𐤦 𐤧 𐤨 𐤩 𐤪 𐤫 𐤬 𐤭 𐤮 𐤯 𐤰 𐤱 𐤲 𐤳 𐤴 𐤵 𐤶 𐤷 𐤸 𐤹 𐤺 𐤻 𐤼 𐤽 𐤾 𐤿

Սամարական գիրը

Արևմտյան արամեերենի լեզվական միջավայրում է ծագել քրիստոնեությունը, և այս լեզվով էին քարգում Հիսուս Քրիստոսն ու նրա առաքյալները: Քրիստոսի արտասանած որոշ խոսքերն ու նախադասություններն Ավետարանում բերված են հենց արամեերենով, ինչպես, օրինակ, հանրահայտ «Էյի՛, էյի՛, լամա՛՛ սարաքբանի» («Աստված իմ, Աստված իմ, ինչու՞ թողնցիր ինձ»): Որոշ գիտնականներ հավկած են ենթադրելու, որ չորս Ավետարանները կամ առնվազն դրանց մի մասը սկզբնապես գրված են եղել արամեերենով, ապա քարգմանվել հունարենի:

Արևմտյան բարբառի մասն է կազմում, այսպես կոչված, «պաղեստինյան քրիստոնեական արամեերենը»: Սա այն լեզուն է, որով մեր քվարկության առաջին դարերում ստեղծագործում էին Պաղեստինում բնակվող քրիստոնյաները, մախ և առաջ՝ մեյրիները, որոնց մասին խոսք կզնա ստորև:

Արևելյան բարբառը տարածված է եղել Միջագետքում և այդ պատճառով կոչվում է նաև «Բաբելոնյան արամեերեն»: Այս բարբառը ևս առավելապես հայտնի է հրեական կրոնական ստեղծագործություններից, օրինակ՝ «Բաբելոնյան Թալմուդից», որն ավելի ծավալուն ու հեղինակավոր աշխատություն է, քան «Երուսաղեմյան Թալմուդը»: Բաբելոնյան արամեերենով է մեզ հասել նաև քարախմբերի հրեական աղանդի գրական

¹ Սամարացիներն առերեսացիների կողմից Հյուսիսային Պաղեստինում բնակեցված ժողովուրդների ու հրեաների միաձուլումից զոյացած ժողովուրդ են: Նրանք հուդայականություն են դավանում, սակայն որպես սուրբ գիրք ճանաչում են միայն Թորան: Բաբելոնյան գերությունից հրեաների վերադառնալուց հետո սամարացիները նրանց օգնություն են առաջարկում երկրի վերականգնման և Երուսաղեմի տաճարի վերակառուցման գործում, սակայն հրեաները հրաժարվում են ճանաչել սամարացիներին որպես ցեղակիցների ու կրոնակիցների, ինչը երկու ժողովուրդների միջև հարյուրամյակներ տևած և նույնիսկ Նոթ Կասկարանում արձանագրված բռնամարտի սկիզբ է դնում: Ներկայումս Իսրայելում բնակվում են մոտ վեց հարյուր արաբախոս սամարացիներ (Նաբոլոս և Խոլոն քաղաքներում), որոնք յուրատեսակ միջանկյալ դիրք են զբաղեցնում հրեաների ու պաղեստինցիների միջև:

ժառանգությունը: Արևելյան արամեերենով և արամեական ուրույն տառատեսակով են գրված նաև մանդեականների՝ համայնքի կրոնական ստեղծագործությունները, որոնց լեզուն ավելի մաքուր է, քան եբրայական բառերով լի հրեական մոտիվներինը:

א ב ג ד ה ו ז ח ט י כ ל מ נ ס ע פ צ ק ר ש ת

Մանդեական գիրը

Հրեական միջավայրում արամեերենի արևմտյան ու արևելյան բարբառներով տարվող ակտիվ գրական գործունեության արդյունքում արամեական գիրը ստանում է ավելի հղկված ու միասնական տեսք, և աստիճանաբար ձևավորվում է մի տառատեսակ, որը հայտնի է «քառակուսի» անունով: «Քառակուսի» գիրը նաև եբրայերենի ու իդիշի գիրն է և, որպես այդպիսին, գործածվում է մինչև այսօր:

אבגדהוזחטיךכלמנסעפצקרשת

Արամեա-եբրայական «քառակուսի» գիրը

Թալմուդում մի քանի անգամ ասվում է, թե «Թորան հարգանք ու պատիվ է մատուցել արամեերենին»: Արամեերենը, փաստորեն, դարձել էր հրեաների ոչ միայն խոսակցական, այլև երկրորդ, եթե ոչ առաջին գրական լեզուն, նրանց հոգևոր կյանքի կարևոր բաղկացուցիչ մասը: Կարելի է ասել, որ արամեերենը հուդայականության լատիներենն էր, որով մինչև միջնադար գրվում էին կրոնական աշխատություններ, ինչպես, օրինակ՝ XIII դարում գրված «Ջոհարը» («Փայլ»), որը հրեական միստիկական ուսմունքի՝ *կաբբալայի* հիմնական դրույթները պարունակող գիրքն է: Այսօր էլ հնարավոր չէ ստանալ ռաբբիի կոչում առանց արամեերենի լավ իմացության, քանի որ չիմանալով արամեերեն՝ հնարավոր չէ ներթափանցել Թալմուդի ու այլ կրոնական սկզբնաղբյուրների խորքային իմաստի մեջ: Ուստի արամեերենի ուսումնասիրումը կազմում է հրեական կրոնական կրթության կարևոր մասը: Արժե նաև հիշատակել, որ երբ XIX դարի երկրորդ կեսին Պաղեստինում տեղի էր ունենում եբրայերենի վերակենդանացումը, արամեերենի լեզվանյութն ակտիվորեն օգտագործվում էր եբրայական նոր բառեր, այդ թվում՝ գիտական ու այլ տերմիններ ստեղծելու համար:

Կենտրոնական բարբառը հիմնականում տարածված է եղել Հյուսիսային Միջագետքում՝ Օսրոյնեն երկրամասից, որի կենտրոնը Եղեսիմն էր (Ուտա), մինչև Ադիաբեն երկրամասը, որի կենտրոնը Արբելն էր: Այս տարածքը ներառում էր նաև Ամիդ, Սամոսատ ու Քեննեշլին քաղաքները: Առավել հայտնի Եղեսիայի անունով՝ այս բարբառը մասամբ տարածված էր նաև Ամտիդում, որը գանազան մշակույթների ու լեզուների խառնարան էր և իր փառքով ու ազդեցությամբ մրցում էր Ալեքսանդրիայի հետ:

Իր քերականական առանձնահատկություններով ու բառապաշարով Եղեսիայի

² Մանդեականության հիմքում ընկած է Հովհաննես Մկրտչի պաշտամունքը: Այս կրոնը ներառում է նաև քրիստոնեության, հուդայականության ու մամիքեության առանձին տարրեր: Նրա ծեսերում մեծ տեղ է հատկացվում խոսող քրիստոնեականների փոքրաթիվ համայնքներ շարունակում են գոյատևել Հարավային Իրաքում և Իրանի հարակից Խուզիստան մահաբզում, սակայն այսօր այս կրոնի հետևորդներն ավելի հայտնի են «սաբիներ» անվանումով (չփոքել հարավ-արաբական հնագույն «սարայացիներ» ժողովուրդի հետ):

բարբառը շատ մոտ է արամեերենի արևելյան բարբառին և հաճախ համարվում է վերջինիս տարատեսակը:

Կենտրոնական բարբառն ընկած է սույն գրքի առարկան հանդիսացող դասական ասորերենի հիմքում:

ՌԱՍԱԿԱՆ ԱՍՈՐԵՐԵՆ: Եղեսիայի բարբառի ամենահին հայտնի գրածոները վերագրվում են մ.թ.ա. III դարին. սրանք հիմնականում տապանագրություններ են: Հեթանոսական շրջանի ամենանշանավոր նմուշը Սամոսատի ստոիկ փիլիսոփա Մար Բար-Սեբրայիոնի նամակն է՝ ուղղված իր որդուն:

Սելևկյան պետության քայքայումից հետո՝ մ.թ.ա. 132 թվականին, Օսրոյենում կազմավորվում է արամեական թագավորություն, որը գոյատևում է մինչև 216 թվականը: Աշխարհագրական մոտիկությունը Պաղեստինին ու Անտիոքին նպաստեց, որ Օսրոյենն դառնար այն առաջին երկրամասերից մեկը, որոնցում տարածվեց քրիստոնեությունը: Արամեացիներից բացի, քրիստոնեության տարածմանը նպաստում էին նաև հույները, որոնք Ալեքսանդր Մակեդոնացու արշավանքից հետո բնակություն էին հաստատել Հյուսիսային Միջագետքում: Օսրոյենի Աբգար IX թագավորը (179-214) եղել է պատմության մեջ քրիստոնեություն ընդունած առաջին արքան (207): Ասորական և հայկական եկեղեցական ավանդույթներն այս թագավորի դարձը վերագրում են Քրիստոսի օրոք ապրած և վերջինիս հետ իրր նամակագրական կապի մեջ եղած Աբգար V-ին, որը Հայ առաքելական եկեղեցու տոնելի սրբերից է: Ըստ այդ ավանդույթների քրիստոնեությունն Օսրոյենն ներմուծել է Թադեոս առաքյալի աշակերտ Ադդեն, որին առաքյալն անձամբ ձեռնադրել է Եղեսիայի եպիսկոպոս:

Օսրոյենում քրիստոնեության տարածումն ու Եղեսիայի վերածումն այդ կրոնի խոշոր կենտրոնի էապես փոխում են Եղեսիայի բարբառի կարգավիճակը: Նախաքրիստոնեական ժամանակաշրջանում չունենալով մյուս երկու բարբառների գործածության ծավալն ու հղվածության աստիճանը՝ այն ոչ միայն բարձրանում է լիարժեք գրական լեզվի մակարդակի՝ երբեմն անվանվելով «քրիստոնեական արամեերեն», այլև արամեական բոլոր բարբառներից միակը սկսում է դիտվել որպես առանձին լեզու՝ իր ուրույն անվանումով:

Բանն այն է, որ արամեացիների միջավայրում, քրիստոնեության տարածման հետ զուգահեռ, «արամեացի» բառն աստիճանաբար դառնում է «հեթանոս» բառի հոմանիշը: Արդյունքում Եղեսիայի քրիստոնյա արամեացիները թե՛ իրենց գրական լեզուն և թե՛ իրենք իրենց սկսում են կոչել *սուրյայյա*, այսինքն՝ «սիրիական», «սիրիացի»: Սա արհեստական նորանմուծություն չէր, բանի որ «Սիրիա» և «սիրիացի» բառերը, որպես «Արամ» և «արամեացի» բառերի հոմանիշներ, գործածվում էին դեռևս սելևկյան ժամանակաշրջանում և, որպես այդպիսիք, արձանագրված են *Մեպտուսգինոսայում*՝ Հին Կտակարանի հունարեն նմանազույն թարգմանության մեջ, որը կատարվել է մ.թ.ա. III դարի կեսերին Եգիպտոսի Պտղոմեոս Ֆիլադելֆոս թագավորի հրամանով: Հարկ է նշել, որ այս ժամանակաշրջանում «Սիրիա» էր կոչվում ոչ միայն առափնյա Սիրիան, որի ամենանշանավոր թաղաքն Անտիոքն էր, այլ նաև Հյուսիսային Միջագետքը՝ ընդհուպ մինչև Ադիաբեն:

Հայերի մոտ *սուրյայյա* բառն ստանում է «ասորի» ձևը (չշփոթել «ասորեստանցի» բառի հետ), իսկ Հյուսիսային Միջագետքը կոչվում է Ասորիք:

Հետաքրքրական է, որ «քաղղեացի» բառը, լինելով, վաստորեն, «արամեացի» բառի հոմանիշը, չի կհսում վերջինիս ճակատագիրը և գործածվում է մինչև այսօր: Դիտարկվող ժամանակաշրջանում քաղղեացի էին կոչվում Միջագետքի հեթանոս արամեացիները, որոնք հատկապես հայտնի էին իրենց աստղաբաշխական գիտելիքներով:

Սելևկյան ասորերենի գիրն *էստրանգելոն*

էր, որն արևմտասեմական գրի հիման վրա զարգացած կուրսիվային, այսինքն՝ կապակցված գիր է: Ենթադրվում է, որ էստրանգելոն կարող է ինչ-որ ձևով առնչված լինել Պարսիսայում գործածվող կապակցված գրի հետ, որը հաճախ դիտվում է միջանկյալ օղակ էստրանգելոյի և «քառակուսի» գրի միջև: Դա միևնույն հանրահայտ գրերը, որոնք Մեսրոպ Մաշտոցի փորձում էր հարմարեցնել հայերենին, կարող էին հենց պարսիսյան գիրը լինել: Սա են հուշում Կորյունի այն խոսքերը, թե դամիելյան գրերը «Փաղված էին ուրիշ դպրություններում»: Համեմայն դեպք, ակնհայտ է, որ դամիելյան գրերը քսաներկու տասնուհինգ արևմտասեմական գրի մի տարատեսակ պետք է լինեին, ինչի օգտին են խոսում նույն Կորյունի խոսքերը, թե «այդ նշանագրերը բավական չեն հայերեն լեզվի սիրողները-կապերն ամբողջությամբ արտահայտելու համար»:

Արամեական կուրսիվային գիրն ընկած է նաև պահլավական գրի հիմքում: Սեմական գրի հարմարեցումն իրանական լեզվին ի սկզբանե պայմանավորեց պահլավական գրի անկատարելությունը: Այս գիրը բարդացնում էին նաև բազմաթիվ գաղափարագրությունները, երբ, օրինակ, «թագավոր» բառի համար գրվում էր արամեերեն *մաչ-րա* բառը, որը, սակայն, ընթերցվում էր *շահ*, կամ «կա» և «չկա» բառերի համար գրվում էին արամեական *իթ* և *լաթ* բառերը, որոնք պահլավերեն հնչեցվում էին որպես *հասթ* և *մեսթ*: Արամեական գաղափարագրությունների ընթերցումը նշվում էր պահլավերեն *ուգ-վարիշ*՝ «բացում» տերմինով: Գոյություն ունեին գաղափարագրությունների հատուկ ձևոճարկներ, որոնցից ամենահայտնին «Շրահանգ-ի-պահլավիք» բառարանն է:

Ասորական գիրն իրենց լեզուներին հարմարացնելու փորձեր են արել իրանալեզու սողղերը և նույնիսկ բյուրքերը: Յորագետքում պահպանվել են XII-XV դարերին վերագրվող տապանաբարերը՝ ասորա-բյուրքական արձանագրություններով: Ենթադրվում է, որ մոնղոլական ավանդական գրի և Հնդկաստանի մի քանի գրերի հիմքում նույնպես ընկած են ասորական տառերը:

Գրական ասորերենը բավականին կարճ ժամանակահատվածում հաստատվում է որպես բոլոր քրիստոնյա արամեացիների գրավոր ու ծիսական լեզու: Գրան նպաստում են նաև ասորերենի ճյուղությունը, դրա ազատ շարահյուսությունը, փոխասությունների համար բաց լինելը: *Սուրյայյա* «ասորի» անվանումն իր հերթին աստիճանաբար տարածվում է բոլոր քրիստոնյա արամեացիների վրա, անկախ այն բանից, թե որտեղ են նրանք բնակվում և արամեական որ բարբառից են օգտվում ասորյայում:

Ասորերենը՝ որպես քրիստոնեական քարոզի և ուսմունքի լեզու, տարածվում է նաև սեմական տարածքից դուրս: Բավական է հիշել, որ Հայաստանում, որտեղ կար ա-

Տեղումական աղոթք՝ էստրանգելո գրով

րամենները որպես գրավոր լեզու գործածելու հարյուրամյակների ավանդույթ, ամբողջ IV դարն անցել է քրիստոնեությունն ասորերենով քարոզելու ու տարածելու փորձերի ներքո: Եվ ժողովրդի լայն զանգվածներին ասորերենի անհասկանալի լինելն է, որ, ի վերջո, թելադրել է հայկական գրի ստեղծման անհրաժեշտությունը:

Արամեացիների ավանդական պառակտվածությունը շարունակվում է նաև քրիստոնեության ընդունումից հետո: Հարևան Սասանյան Իրանից տարածվող դուալիզմի ու ֆատալիզմի գաղափարներին դիմագրավելու անհրաժեշտությունն ասորիներին ստիպում է հատուկ ուշադրություն դարձնել քրիստոնեության դոգմատիկ դրույթների մշակմանը, որի արդյունքում նրանք հաճախ հայտնվում են քրիստոնեական ուսմունքի «ծայրահեղական» դիրքերում: Այսպես՝ նրանց մի մասն ընդունում է 428 թվականին Կոստանդնուպոլսի պատրիարք դարձած Նեստորի ուսմունքը, ըստ որի՝ Քրիստոսն ունի երկու բնություն և երկու անձ: Նեստորականության հիմքում ընկած էին Դիոդորոս Տարսոնացու և Թեոդորոս Մոպսուեստացու աստվածաբանական հայացքները: Եղեսիայում գործում էր նեստորականների «պարսից» կոչվող համրահայտ քարճրագրայն դպրոցը, որտեղ, ի թիվս բազմաթիվ այլ առարկաների, ուսումնասիրվում և զարգացվում էին այս երեք աստվածաբանների գաղափարները:

431 թվականին Եփեսոսի երրորդ տիեզերական ժողովը նզովում է Նեստորին և նրա հետևորդներին, որին հետևում են նեստորականների հալածանքները: Եղեսիայից վտարված նեստորականները պատսպարվում են Սասանյան Իրանում, որտեղ Շապուհ I-ի (243-273) կատարած տեղահանումների հետևանքով արդեն գոյություն ունեւր ասորական քրիստոնեական համայնք: Սասանյանների տիրույթներում նեստորականների գլխավոր մշակութային ու հոգևոր կենտրոնը դառնում է Մժբիհը՝ Եղեսիայից հետո ասորական քրիստոնեության երկրորդ նշանավոր հոգևոր կենտրոնը: 489 թվականին Եղեսիայից Մժբիհ է տեղափոխվում նաև «պարսից դպրոցն» ու այստեղ ապրում վերելքի նոր ժամանակաշրջան:

Թեև Իրանում քրիստոնյաները, որոնց մեծ մասն ասորիներ էին, պարբերաբար ենթարկվում էին դաժան հալածանքների, այդուհանդերձ, որպես Բյուզանդիայի կողմից հալածվող տարր՝ նեստորականները, ի դեմս Սասանյան Իրանի, ի վերջո գտնում են հզոր, թեև ոչ այնքան հուսալի հովանավորի և հիմնում այստեղ իրենց առանձին՝ Արևելքի եկեղեցին: Ասորիների ազդեցությամբ Իրանում գործող քրիստոնեական եկեղեցին կարճ ժամանակահատվածում ամբողջությամբ դառնում է նեստորական: Հատկանշական է, որ քրիստոնեություն ընդունող պարսիկները հիմնականում դառնում էին ասորական կրոնական համայնքի անդամներ, քանի որ վաղ միջնադարում կրոնական պատկանելությունն առավելություն ուներ ազգային ու լեզվական ինքնության նկատմամբ: Նեստորականություն ընդունած բազմաթիվ պարսիկներ, այդ թվում՝ նախկին զրադաշտական մոզեր, դառնում են ասորական մշակույթի ու եկեղեցու նշանավոր գործիչներ, իսկ ոմանք՝ նույնիսկ նեստորական կաթողիկոսներ:

Նեստորական ասորիները Կենտրոնական Ասիայում, Հնդկաստանում և նույնիսկ Չինաստանում վարում էին չափազանց ակտիվ քարոզչական գործունեություն, ինչին նպաստում էր Բյուզանդական կայսրությունում շուկաներ կորցրած նեստորական աստորականների ներքափանցումն այս երկրներ ու դրանցում ասորական առևտրական համայնքների կազմավորումը: Նշված երկրամասերում նեստորականները բողեւ են ասորական բազմաթիվ արձանագրություններ, որոնցից ամենամշանավորը 781 թվա-

կանին վերագրվող Միանֆույի երկլեզու՝ շինարեն-ասորերեն քարակոթողն է:

XIV դարի սկզբին նեստորական եկեղեցին ունեցել է մետրոպոլիտական 30 արքունի և մոտ 200 թեմ՝ Միջագետքից մինչև Հեռավոր Արևելք: Սակայն XIV դարի վերջին Լեւոնյանների արշավանքներն առաջացնում են նեստորական եկեղեցու անկումը, և այն, ի վերջո, ամփոփվում է Միջագետքում ու հարակից շրջաններում, որտեղ և գոյատևում է մինչև այսօր:

1551 թվականին ասորի նեստորականների մի մասն ընդունում է կաթողիկոսություն: Նեստորականներից տարբերվելու համար կաթողիկոս ասորիներն ընդունում են «Փաղեհացիներ» անունը, իսկ իրենց եկեղեցին կոչում Քաղեհական, ինչը, իհարկե, չի ներառում որևէ հատուկ առնչություն Հին Միջագետքի քաղեհացիների հետ:

Ասորիների մյուս մասը խիստ հակադրվում է նեստորականությանը և հարում քրիստոսաբանության մեկ այլ բևեռի: Բացի նեստորականությունից, սրանք մերժում են նաև Քաղեհեղոնի 451 թվականի տիեզերական ժողովի որոշումները Քրիստոսի բնության մասին և, ինչպես և հայերը, ընդունում միաբնակության գաղափարը: VI դարում Եղեսիայի եպիսկոպոս Հակոբ Բարադեսը (542-578) ասորի հակաքաղեհեղոնական միաբնակներին միավորում է առանձին եկեղեցու մեջ, որն ստանում է Ասորի ուղղափառ եկեղեցի կամ, Բարադեսի անունով, Հակոբիկյան եկեղեցի անվանումը: Հակոբիկյան եկեղեցին մինչև օրս սերտ կապեր է պահպանում նույնադասական Հայ առաքելական եկեղեցու հետ:

Ընդունելով նեստորականների մարտահրավերը՝ հակոբիկները նույնպես ակտիվ գործունեություն են ծավալում իրենց բնակության սահմաններից դուրս՝ քարոզչական առաքելություններով հասնելով մինչև Հնդկաստան, որտեղ հիմնում են մինչև օրս գործող և մոտ 2 մլն հետևորդ ունեցող Մալաբարի եկեղեցին: Իր զարգացման գագաթնակետին՝ XIII դարում, Հակոբիկյան եկեղեցին ունեցել է մետրոպոլիտական 20 արքունի և 103 թեմ: Ինչպես և նեստորականների պարագայում, Լեւոնյանների արշավանքների արդյունքում հակոբիկյան եկեղեցիների ու վանքերի մեծամասնությունն ավերվում է, և սկսվում է այս եկեղեցու երկարատև անկումը:

Միջնադարում հակոբիկների միջավայրում նույնպես սկսում է տարածվել կաթողիկոսությունը, և 1785 թվականին Ասորի ուղղափառ եկեղեցուց պաշտոնապես առանձնանում է Ասորի կաթողիկոս եկեղեցին:

Կենտրոնական և Հեռավոր Արևելքից բացի, ասորիներն ակտիվ քարոզչական գործունեություն էին ծավալում արաբների միջավայրում, որտեղ հաճախ հայտնվում էին նաև բյուզանդացիների ու պարսիկների դիվանագիտական համձնարարություններով: Այստեղ ևս նեստորականներն ու հակոբիկները մրցակցության մեջ էին իրար հետ և հաճախ կրոնական բանավեճեր էին կազմակերպում իրար միջև արաբական իշխանավորների առջև, ինչպես դա անում էին պարսից շահանշահների ու բյուզանդական կայսրերի արքունիքներում:

Նեստորականների քրիստոնեական քարոզը հատկապես հաջող էր Արաբական թերակղզու հյուսիս-արևելքում գտնվող Հիրթա (կամ Հիրա) արաբական փոքր իշխանությունում, որի իշխող՝ Լախմյանների տոհմը՝ լինելով Սասանյան Իրանի քաղաքական ազդեցության ոլորտում, դավանում էր քրիստոնեություն: Հիրայի խոսակցական լեզուն արաբերենն էր, սակայն որպես գրավոր լեզու գործածվում էր ասորերենը:

Հակոբիկների կրոնական ազդեցությունն ավելի ուժեղ էր Հիրայի հակառակորդը

համարվող Ղասասանյանների արաբական իշխանությունում, որի քաղաքական պատմությունը ծավալվում է VI դարում: Ի տարբերություն Իրանի դաշնակից Հիրայի, Ղասասանյանների իշխանությունը քաղաքական սերտ կապերի մեջ էր Բյուզանդիայի հետ: 563 թվականին Ղասասանյան իշխան ալ-Հարիսը ժամանում է Կոստանդնուպոլիս և համոզյալու է Նուստինիանոս կայսեր հետ: Այցի ընթացքում նա համոզում է Նուստինիանոսին՝ Եղեսիայի եպիսկոպոս Հակոբ Բարսեղոսին նշանակել նաև Ղասասանյան իշխանության հոգևոր հովիվ:

Հակոբիկներն ամուր դիրքեր ունեին նաև Եմնումում ու հարակից շրջաններում, որտեղ նրանց հակառակորդները ոչ այնքան նեստորականներն էին, որքան հրեաները: Համարվում է, որ հակոբիկների միաբնակությունն ազդեցություն է գործել իսլամի գաղափարախոսության կազմավորման վրա:

Ասորիների քարոզչական գործունեությունը հարավում տարածվում էր մինչև Նուբիա ու Եթովպիա, որոնց քրիստոնեացման գործում նրանք մեծ դեր են խաղացել:

Ի տարբերություն նեստորականների ու հակոբիկների, ասորիների մի փոքր զանգված ընդունում է Քաղկեդոնի ժողովի որոշումները: Սրանք ստանում են մելքիներ անվանումը, որն առաջացել է ասորերեն *մալթա*՝ «թագավոր» բառից և արտահայտում է այս համայնքի կրոնական միասնությունը բյուզանդական կայսեր կողմից հովանավորվող քաղկեդոնական ուղղափառության հետ: Մելքիները հիմնականում կենտրոնացած էին Պաղեստինում, որտեղ V-VI դարերում արևմտյան արամեերենով և էստրանգելոյին հարող, այսպես կոչված, «ասորա-պաղեստինյան» գրով ծավալել էին եռանդուն գրական, առավելապես՝ բարգամանչական գործունեություն:

Ժամանակի ընթացքում ասորի մելքիները ձուլվում են բվով իրենց գերագնացող նույնադավան հույների հետ և հիմնականում կորցնում իրենց ասորական ինքնությունն ու լեզուն: Արաբական արշավանքների արդյունքում Մերձավոր Արևելքի ուղղափառները դառնում են արաբախոս, իսկ նրանց եկեղեցին հայտնի է դառնում որպես «հույն-ուղղափառ»: Ուշ միջնադարում հույն-ուղղափառների մի մասն ընդունում է կաթոլիկություն՝ կազմելով Հույն-կաթոլիկ եկեղեցին, որի հետևորդները, ի տարբերություն հույն-ուղղափառների, այսօր էլ կոչվում են մելքիներ:

Ասորական միջավայրում գոյացած մեկ այլ կրոնական համայնք են մարոնիները: Ըստ ավանդույթի՝ համայնքի հիմնադիրը համարվում է V դարում ապրած ճգնավոր վանական Մարոնը: Համայնքը սկզբնապես ընդունում է սոնոֆելիզմի ուսմունքը, ըստ որի՝ Քրիստոսն ունեւ երկակի բնություն և միասնական կամք: VII դարում Հովհաննես Մարոն պատրիարքն առաջնորդում է մարոնիներին դեպի Լիբանան, որտեղ նրանք բնակվում են մինչև այսօր՝ կազմելով Լիբանանի խոշորագույն քրիստոնեական համայնքը: Միջին դարերում, երբ մարոնիները դաշնակցում են իսլամիկների հետ, նրանց միջավայրում սկսում է տարածվել կաթոլիկությունը, և 1736 թվականին մարոնական եկեղեցին պաշտոնապես ճանաչում է Հռոմի պապի գերագահությունը: Թեև մարոնիները, որպես ծիսական լեզու, արաբերենի հետ մեկտեղ օգտագործում են ասորերենը, ասորական ինքնագիտակցությունը նրանց մտա թույլ է արտահայտված և չի կրում համատարած բնույթ: Մարոնիների մտա որոշ տարածում ունի փյունիկեցիների շատավիղ լի-նելու գաղափարը, ինչը գիտական տեսակետից անհիմն է:

Կրոնական պառակտվածությունն ու անվերջ աստվածաբանական վեճերը էլ ավելի են խորացնում անբախտն ասորի ժողովրդի երկու հիմնական զանգվածի՝ նես-

տորականների ու հակոբիկների միջև: Սրան նպաստում էր նաև այն, որ հակոբիկները հիմնականում կենտրոնացած էին Բյուզանդական կայսրությունում ու վայելում էին նրա հովանավորությունը, մինչև նեստորականները Սասանյան Իրանի հպատակներն էին:

Դավանական ու քաղաքական պառակտվածությունն իր շարունակությունն է գտնում ասորիների գրավոր մշակույթում: Էստրանգելո տառատեսակի հիման վրա երկու համայնքները մշակում են գրի սեփական տարբերակներ: Հակոբիկների մոտ ձևավորվում է *սերսոն* կոչվող տառատեսակը, որի ձայնավորները նշվում են հունական այբուբենի համապատասխան տառերին նմանեցված ձայնանիշերով: Նեստորականների մոտ ձևավորված գրում, որը հենց այդպես էլ կոչվում է՝ նեստորյան, ձայնավորները նշվում են կետերից և կարճ զծիկներից կազմված ձայնանիշերով, որոնք զարգացել են էստրանգելոյի ձայնանիշադրության պարզունակ համակարգից: Այստեղ հարկ է նշել, որ սեմական բոլոր քաղաձայնային գրերից ասորականում առաջինն սկսեցին ձայնավորների համար օգտագործվել հատուկ նշաններ: Չայնավորման այս եղանակն այնուհետև ընդօրինակեցին նաև հրեաներն ու արաբները:

Տեղական բարբառներն իրենց հերթին ազդեցություն գործեցին գրական ասորերենի հնչյունական համակարգի վրա, որի հետևանքով ձևավորվել և մեղ է

հասել ասորական տեքստերի ընթերցման երկու ավանդական եղանակ՝ հակոբիկյան և նեստորական: Թեև տարբերությունը երկուսի միջև չնչին է, համարվում է, որ նեստորականն ավելի ճիշտ է վերարտադրում Եղեսիայի բարբառը:

Գրային ու բարբառային տարբերությունները յիսնագրեցին ասորերենին պահպանել արամեերենի՝ Մերձավոր Արևելքի ազգամիջյան ու միջազգային հաղորդակցության լեզվի ավանդական դերը: Ասորերենը դառնում է Սասանյան Իրանի ու Բյուզանդիայի միջև դիվանագիտական հաղորդակցության լեզու, քանի որ, ինչպես արդեն նշվեց, այդ տեղությունները միմյանց միջև կամ երրորդ կողմերի հետ փոխանակվող դիվանագիտական առաքելությունները հաճախ վստահում էին իրենց տիրույթներում բնակվող ասորիներին, որոնք աչքի էին ընկնում լեզուների իմացությամբ, եռանդուն և նախաձեռնող խառնվածքով, դիվանագիտական գործունեության համար պահանջվող հմտություններով: Ասորիներին դիվանագիտական առաքելություններ էին վստահում նաև այլ պետությունները: Այսպես՝ ասորի էր Ֆրանսիայի թագավոր Ֆիլիպ IV Գեղեցիկի (1268-1314) մոտ մտնողական խանի ուղարկված դեսպանը:

Միջնաձայնային անվերջ մտավոր մրցակցությունը նպաստում է ասորիների կրթական համակարգի զարգացմանը, որը մի քանի հարյուրամյակ լավագույն էր

أَبُو، وَحَقْلًا،
 نَسْتُورِي مَعْنَى، أَلَا مَحْفُوقًا،
 تَوْهًا رَجُلًا، أَمَّا وَحَقْلًا، أَوْ
 كَانًا، حَكَ كَسَفًا وَهَوَمًا،
 مَعْنَى، مَعْنَى كَيْ تَعْنَى،
 أَمَّا رَجُلًا، أَوْ سَيَّ مَعْنَى لَسْتُورِي،
 هَلَا أَلَا كَانًا تَعْنَى، أَلَا فِي مَعْنَى
 حَقْلًا، تَعْنَى، وَتَعْنَى،
 مَحْفُوقًا، سَمَّا هَا مَحْفُوقًا،
 لَكُنَّا كُنَّا، أَمَّا

Տեղական ասորերեն՝
սերսոն գրով

بَعْدَ، وَتَعْنَى،
 يَهْدِي مَعْنَى، هَلَا مَحْفُوقًا،
 يَهْدِي مَعْنَى، بَعْدَ، بَعْدَ، وَتَعْنَى،
 تَعْنَى، أَوْ كَيْ مَعْنَى، وَهَوَمًا،
 تَعْنَى، مَعْنَى كَيْ تَعْنَى،
 هَلَا مَحْفُوقًا، لَيْسَتْ، يَكُنْ فِي،
 هَلَا مَحْفُوقًا، مَعْنَى، وَتَعْنَى،
 مَحْفُوقًا، هَلَا مَحْفُوقًا،
 لَكُنَّا كُنَّا، أَمَّا

Տեղական ասորերեն՝
նեստորյան գրով

Մերձավոր Արևելքում: Ասորիներն ունեին բազմաթիվ տարրական դարոցներ, որոնք գործում էին եկեղեցիներին ու վանքերին կից կամ դրանցից անկախ ու ապահովում գրաճանաչության բարձր մակարդակն ասորիների միջավայրում: Տարրական կրթություն ստացածները կարող էին իրենց ուսումը շարունակել Եղեսիայում, Մծբինում ու իրանական Գուռդի-Շափուրում գործող բարձրագույն դպրոցներում: Կրթական համակարգի արդյունավետությանը հատկապես աչքի էին ընկնում նեստորականները:

Կրթական զարգացած համակարգն ու հարյուրամյակներ շարունակվող միջին-մայրցամաքի մրցակցությունն իրենց հերթին նպաստում էին զրավոր մշակույթի զարգացմանը: Արդյունքում ստեղծվում է չափազանց հարուստ մի գրականություն, որն իր ծավալով ի վերջո գերազանցում է արամեական մյուս բարբառներով գրված բոլոր ստեղծագործությունները՝ միասին վերցրած:

Ասորական գրականության կայացման ու ասորերենի ընդհանուր ոճի ձևավորման վրա հատկապես մեծ ազդեցություն է գործել Աստվածաշնչի թարգմանությունը, որի տարբերակների բանակով ասորական գրականությունը զբաղեցնում է առաջին տեղը: Նոր Կտակարանն ասորերենի թարգմանելու առաջին հայտնի փորձը II դարում կատարել է Հռոմում կրթություն ստացած Տատիանոսը, որը չորս Ավետարանները միավորել է մեկ ստեղծագործության մեջ: Հիսուսիինգ գլուխ պարունակող այս թարգմանությունը հայտնի է հունական *Դիատեսսարոն* անվանումով: V դարին վերագրվող չորս Ավետարանների ասորական մեկ այլ թարգմանություն 1842 թվականին հայտնաբերել է հրատարակել է Բրիտանական թանգարանի գիտաշխատող Ուիլյամ Կուլբենտնը, որի անունով այն կոչում են «կյուրեռոյան» և պայմանականորեն նշում որպես Syr⁶: 1892 թվականին Սիմայի թերակղզու Սուրբ Կատարինեի վանքում Ազնես Սմթբ Լյուիսը հայտնաբերում է չորս Ավետարանների ասորական ևս մեկ տարբերակ պարունակող պալիմպսեստ (ինն տեքստից մաքրված և երկրորդ անգամ օգտագործված մագաղաթ), որը հայտնի է որպես Codex Sinaiticus կամ Syr⁵: Հայտնի է նաև, որ ենթադրաբար V դարում մեկքիները Պաղեստինի արևմտյան արամեերենի են թարգմանել Աստվածաշնչի որոշ, եթե ոչ բոլոր գրքերը, սակայն դրանցից պահպանվել են միայն Ավետարանների, Գործք Առաքելոցի ու Պողոս առաքյալի թղթի որոշ հատվածները (Syr^{pa1}):

Աստվածաշնչի ասորական կանոնական ամբողջական թարգմանությունը, որը կոչվում է *Փղշիթթա* («պարզ», Syr^P), վերջնականապես խմբագրվել է V դարի սկզբերին: Սա ասորական բոլոր եկեղեցիների կողմից ճանաչված Աստվածաշնչի կանոնական թարգմանությունն է: Հայտնի են Փղշիթթայի Նոր Կտակարանի ավելի քան 350 ձեռագրեր, որոնց միջև տեքստային տարբերություններն աննշան են:

509 թվականին հակոբեկյան Ֆիլոքսենոս Մաքրուղացի եպիսկոպոսը ուն Պոլիկարպի հանճարարում է վերախմբագրել Փղշիթթայի տեքստը. այս տարբերակը հայտնի է որպես «Ֆիլոքսենյան» (Syr^{Pb}): 616 թվականին Ֆիլոքսենոսն տարբերակը մասամբ վերանայում է Թովմաս Հերաբլայեցին («հերաբլայան» տարբերակ, Syr^h), իսկ 704-705 թվականներին Հին Կտակարանի թարգմանությունը վերանշակում է Հակոբ Եղեսիացին՝ հենվելով հունական թարգմանության վրա:

Նեստորականներն ավելի մեծ ակնածանքով էին վերաբերվում Փղշիթթայի V դարի տարբերակին: Նրանց մոտ թարգմանությունը վերախմբագրելու միակ հայտնի փորձը VI դարում կատարել է Մար Աբբա I կաթողիկոսը, սակայն այդ տարբերակը պարունակող ձեռագրեր չեն հայտնաբերվել:

Թարգմանչական գործունեությունն ընդհանրապես շատ մեծ տեղ էր զբաղեցնում ասորիների հոգևոր կյանքում և չէր սահմանափակվում միայն Աստվածաշնչով: Այդ գործունեությունը ներառում էր հունալեզու՝ անտիկ ու բյուզանդացի քիչ քե շատ նշանավոր բոլոր հեղինակների, որոնց ստեղծագործությունների մի մասը պահպանվել է միայն ասորական թարգմանությունների տեսքով: Հունարենից կատարված թարգմանությունների շնորհիվ ասորերենի մեջ ներթափանցում են մեծ թվով հունական փոխառություններ, հիմնականում՝ փիլիսոփայական ու աստվածաբանական տերմիններ: Հունարենից կատարվող ակտիվ թարգմանության հետևանքով ձևավորվում է նաև դասական ասորերենի ուրույն շարահյուսական համակարգը, որը, ի տարբերություն սենական այլ լեզուների, աչքի է ընկնում ազատությամբ ու ճկունությամբ:

Ակտիվորեն թարգմանվում էին նաև պահլավական և պահլավերենի թարգմանված հեղիական գրական գործերը, ինչպես, օրինակ՝ առակների հանրահայտ «Զալիլա և Դիմնա» հավաքածուն: Ինչպես և հունարենը, թեև ոչ նույն ծավալով, պահլավերենն իր հետքն է թողել ասորերենում, հանձինս բազմաթիվ փոխառությունների:

Ինչ վերաբերում է բուն ասորական գրականությանը, ապա այն չափազանց հարուստ ու բազմաբնույթ է: Հայտնի են II-XIII դարերում ստեղծագործած մոտ 150 ասորի հեղինակներ, որոնց գործերը մեզ են հասել ավելի քան երեք հազար ձեռագրերում: Այստեղ տեղին է նշել, որ ասորական մշակույթն աչքի չի ընկնում մյուսական արժեքների առատությամբ և հիմնականում, ինչպես և հրեականը, խոսքի մշակույթ է, ուստի ձեռագրերի դերն ու արժեքը դրանում հիրավի անգնահատելի են:

Ասորական գրականությունը ներառում է կրոնական, փիլիսոփայական, աշխարհագրական, բժշկական, աստղագիտական, այրիմիական, գյուղատնտեսական, գեղարվեստական և այլ բնույթի գործեր: Հատկապես արժեքավոր է ասորական հայրաբանական գրականությունը, որի շնորհիվ ասորերենը լատիներենից ու հունարենից հետո հիրավի դառնում է քրիստոնեության երրորդ կարևորագույն լեզուն:

Ասորական գրականությունը սնուցող կարևոր աղբյուրներից մեկը ժողովրդական բանահյուսությունն էր, որը սերտորեն կապված է Մերձավոր Արևելքի սենական և ոչ սենական հնագույն ավանդապատումների հետ: Ասորական ժողովրդական բանահյուսության կարևորագույն նմուշն իմաստուն Ախիկարի մասին զրույցն է, որը, ենթադրաբար, ունի ասորեստանյան ծագում, և որի հնագույն արամեական տարբերակը հայտնաբերվել է արդեն հիշատակված Էլեֆանտինյան պապիրոսային արխիվում: Ձրույցի առանձին դրվագներ ներթափանցել են Աստվածաշունչ, այն հիշատակվում է նաև Եզովկոսի մոտ: Ձրույցի հերոսները Ասորեստանի Սենեբերին (Սիմաբերիթ) Նարբան են: Արկածներով ու փիլիսոփայության ու բարոյալիտության խտացում է: Ձրույցը տարածված է եղել նաև այլ ժողովուրդների մոտ: Այսպես՝ դեռևս V դարում զրույցն ասորերենից թարգմանվել է հայերենի ու մեծ ժողովրդականություն վայելել միջնադարյան Հայաստանում «Պատմութիւն և խրատք Խիկարայ իմաստնոյ» անունով: Գոյություն ունեն գրույցի հունական, եթովպական, սլավոնական, արաբական և այլ խմբագրումներ: Ախիկարի հետ է առնչված արաբական բանահյուսության հերոս իմաստուն Լոխմանը:

Ասորական դասական հեղինակային գրականության առաջին նշանավոր դեմքը

Բար Դայասանն է (154-222), որն իր անունն ստացել է Եղեսիայի միջով հոսող Դայասան գետից: Հայերին այս հեղինակը ծանոթ է Բարդաժան անունով: Ի ծնն հեթանոս և, ըստ ժամանակակից հույն հեղինակների, ազգությամբ պարսև Բար Դայասանը հասուն տարիքում ընդունում է քրիստոնեություն, սակայն հարում է ալեքսանդրիական գնոստիցիզմին՝ արժանանալով «վերջին գնոստիկ» մականվանը: 216 թվականին, երբ Հռոմի Կարակալլա կայսրը գրավում է Եղեսիան, Բար Դայասանը պատսպարվում է Հայաստանում, որտեղ, ըստ Մովսես Խորենացու, գրում է հայոց պատմությունը:

Բար Դայասանի փիլիսոփայական հայացքները երկխոսության ձևով շարադրված են նրա «Երկրների օրենքների գիրք» ստեղծագործության մեջ: Սակայն, բացի փիլիսոփայությունից, հեղինակն այդ գրքում անդրադառնում է նաև աստղաբաշխությանն ու տիեզերաբանությանը՝ հանդես գալով որպես Միջագետքի քաղղեական գիտելիքների ու ավանդույթների կրող: Սա, սակայն, չի խանգարում Բար Դայասանին պնդել, թե մարդու կամքն ազատ է և չի կրում արտաքին բնական երևույթների ազդեցությունը: Գիրքը պարունակում է նաև մեծ թվով տեղեկություններ զանազան ազգերի մասին՝ չինացիներից մինչև քրիստանացիներ, ինչպես նաև բազմաթիվ աստղագիտական հաշվարկներ:

Բար Դայասանը եղել է նաև տաղանդավոր բանաստեղծ և թողել 150 շարականից բաղկացած ժողովածու: Նրա բանաստեղծական ոճը մեծ ազդեցություն է թողել հաջորդ սերունդների ասորի հեղինակների, այդ թվում՝ Եփրեմ Ասորու վրա: Նա, մասնավորապես, առաջինն է ներմուծել ակրոստիքոսը, որն այնուհետև լայն տարածում է գտել ասորական գրականության մեջ: Բար Դայասանի բանաստեղծական ավանդույթների շարունակողը եղել է նրա որդի Հարմոնիոսը, որը, ըստ ժամանակակիցների, տաղանդով չի զիջել հորը, բայց որի ստեղծագործություններից ոչինչ չի պահպանվել:

Վաղ շրջանի ասորական գրականության վերջին նշանավոր ներկայացուցիչն Աֆրահաթն է (?-350), որը հայտնի է «Պարսիկ իմաստուն» մականունով: Լինելով պարսիկ գրադաշտականների զավակ՝ Աֆրահաթը հասուն տարիքում ընդունել է քրիստոնեություն և ճանաչում ստացել որպես աստվածաշնչյան տեքստերի տաղանդավոր մեկնիչ: Նա մախ և առաջ հայտնի է ասորական այբուբենի 22 տառերի քանակով կազմված բարոգների ժողովածուով, որը հասել է նաև հայերեն թարգմանությամբ, սակայն սխալմամբ վերագրվում է Հակոբ Մծրնացուն:

IV դարը քրիստոնեության համար չափազանց կարևոր ժամանակաշրջան էր, երբ վերսիմաստավորվում էին դասական փիլիսոփայությունն ու հեթանոսական գնոսիսը, ծնվում էին քրիստոնեության մոր դրույթներն ու գաղափարները, սկիզբ էին առնում երրորդաբանական ու քրիստոսաբանական վեճերը, ձևավորվում էր ճգնաժամային: Այս գործընթացներում կարևոր դեր էին խաղում ասորիները, որոնցից ամենանշանավորը սուրբ Եփրճն Ասորին էր՝ «Ասորիների մարգարեն» (306-373): Այս տաղանդավոր հեղինակի գրչին պատկանում կամ վերագրվում են սուրբգրային բազմաթիվ մեկնություններ, դավանական աշխատություններ, ճառեր, աղոթքներ, ներբողներ, կցուղիներ, որոնք շարադրված են արևելաքրիստոնեական մտքին հատուկ խորհրդապաշտական ոգով, հայտնութենական բափանցումներով ու քննարկանությամբ: Եփրեմ Ասորու ստեղծագործության մեջ հատուկ տեղ են գրավում, այսպես կոչված, *միմրաները*՝ հանգավոր կամ արձակ բարոգները, և *մաղառաները*՝ շարականները: Նա թողել է նաև ասորական կրոնական բանաստեղծության այլ՝ *բերրաբա, սողիբա, բաուրա, թեշրոխա* ժանրային ձևերի բազմաթիվ նմուշներ:

Եփրեմ Ասորին հսկայական ազդեցություն է գործել ոչ միայն ասորական կրոնական մտքի և բանաստեղծության, այլև Արևելյի ու Արևմուտքի քրիստոնեական այլ ուղղությունների վրա: Նրա ստեղծագործություններից շատերը թարգմանվել են հայերեն, իսկ մի բանիսը հայտնի են միայն հայերեն թարգմանությամբ: Հայ առաքելական եկեղեցին Եփրեմ Ասորուն դասել է համաքրիստոնեական տոնելի սուրբ հայրերի շարքը և նրա հիշատակը տոնում է տարեկան երկու անգամ:

Մեկ այլ նշանավոր հեղինակ էր արդեն հիշատակված Մար Աբրա I ցեստորական կարողիկոսը (540-552), որը քրիստոնեություն ընդունած գրադաշտական էր: Կրոնական կրթություն ստանալով Մծրինում, Եղեսիայում ու Կոստանդնուպոլսում՝ նա հիմնում է, այսպես կոչված, «Մեկնիայի դպրոցը» և ճանաչում ստանում գրադաշտական մոզերի դեմ ուղղված իր գործերով, որոնց համար հալածանքների է ենթարկվում Խոսրով I-ի կողմից և, ի վերջո, մահանում քանդում:

VI դարում ստեղծագործած հեղինակներից արժե հիշատակել մծրինացի ցեստորական Հովսեփ Հուգայային, որին վերագրվում է ասորերենին նվիրված ամենահին քերականական աշխատությունը: Հուգայան նաև համարվում է ցեստորյան գրի ծայնափայլի համակարգի ստեղծողը:

Ասորական բանասիրական մտքի նշանավոր ներկայացուցիչներից է արդեն հիշատակված հակոբիկ Հակոբ Եղեսիացին (?-708): Ծնունդով անտիոքցի՝ նա կրթություն էր ստացել Քենենշրինի ասորական քարձրագույն դպրոցում և Ալեքսանդրիայում, ապա դարձել Եղեսիայի եպիսկոպոս: Նրա գրչին են պատկանում ասորական ու հունական ուղղագրության և կեստադրության մասին բանասիրական մի շարք գործեր: Հակոբ Եղեսիացու անվան հետ է կապված արևմտյան ասորական գրի մեջ ծայնավորների համար նշաններ ներմուծելու առաջին փորձը, ընդ որում՝ ենթադրվում էր այդ նշանները տեղադրել թաղանայններ շնող տառերի միջև: Սակայն այս եղանակը չարմատավորվեց, և, ի վերջո, ձևավորվեց հունական այբուբենի տառերի հիման վրա ստեղծված ծայնանիշերի՝ մեզ հայտնի համակարգը:

Մեկ այլ նշանավոր հակոբիկ հեղինակ էր Սարգիս Ռեշայնացին (?-536), որն ուսումն ստացել էր Ալեքսանդրիայում և ասորի առաջին նշանավոր հանրագիտակն էր: Նրա գրչին պատկանում են փիլիսոփայությանը, տրամաբանությանն ու աստղագիտությանը վերաբերող մի քանի ստեղծագործություններ և բազմաթիվ թարգմանություններ: Սակայն Սարգիս Ռեշայնացին նախ և առաջ հայտնի էր որպես հմուտ բժիշկ ու հունական բժշկական աշխատությունների թարգմանիչ:

Հակոբիկ հեղինակների շարքում հիշատակվում է արժանի նաև Հակոբ Սեբուդացին (451-521)՝ հայտնի իր բազմաթիվ քարոզներով, ուղերձներով ու շարականներով, որոնցում լայնորեն օգտագործվում է Հին Կտակարանի թեմատիկան: Նրա հայացքները զգալիորեն ազդել են Հակոբիկյան եկեղեցու վարդապետության վրա, իսկ գրական ստեղծագործություններից շատերը ներառվել են հակոբիկյան պատարագի մեջ:

Մեծ արժեք է ներկայացնում ասորական, հատկապես հակոբիկյան պատմագրությունը: Ասորի պատմիչներից նախ և առաջ աչքի է ընկնում Միքայել Ասորին (1126-1199), որը 1166 թվականից եղել է նաև Հակոբիկյան եկեղեցու *մաֆրիսանը*՝ պատրիարքը: Նրա պատմական բազմաթիվ գործերից շատերը, այդ թվում՝ ամենակարևորը՝ «Ժամանակագրությունը», դեռևս միջնադարում թարգմանվել են հայերեն:

VII դարում՝ արամեացիներից երկու հազարամյակ անց, Արաբական քերական

գուց արտահոսեց սեմական ևս մեկ ժողովուրդ՝ արաբները, որոնք իսլամի դրոշի տակ կարճ ժամանակում նվաճեցին Մերձավոր Արևելքն ու Հյուսիսային Աֆրիկան: Արաբական տիրապետության առաջին հարյուրամյակն ասորիների համար ընդհանուր առմամբ տանելի էր: Նրանք շատ կարևոր դեր խաղացին արաբական մշակույթի զարգացման գործում: Լիմելով արաբերենին ցեղակից լեզվի կողմեր՝ ասորիներն իրենց ավանդականորեն ակտիվ քարգմանչական գործունեությունն ուղղեցին ասորերենից արաբերեն բարձրագույնություններ կատարելու վրա: Նրանց շնորհիվ ժամանակին ասորերենի քարգմանված հունարեզո գրականությունը, նախ և առաջ՝ անտիկ հեղինակների փիլիսոփայական ու բժշկական գործերը, հասու դարձան ոչ միայն արաբներին, այլ, վերջիններիս միջոցով, նաև միջնադարյան Եվրոպային:

Սակայն արաբական գերիշխանությունն ի վերջո տխուր հետևանքներ ունեցավ ասորիների համար: Նրանց ճնշող մեծամասնությունն աստիճանաբար ենթարկվեց կամավոր կամ պարտադրված իսլամացման և, ի վերջո, արաբացավ: Արամեական տարրը զգալի մաս է կազմում այսօրվա Սիրիայի, Լիբանանի ու Իրաքի արաբ բնակչության գեներտիկական նկարագրում:

Ասորիների մի մասը, ինչպես, օրինակ՝ մարոնիները, պահպանեց քրիստոնեական հավատը, սակայն դարձավ արաբախոս՝ այս կամ այն չափով պահպանելով նախնիների լեզուն ծիսակատարության մեջ: Արաբախոս ասորիներն ու մյուս քրիստոնյաներն արաբերեն գրելու համար որոշ ժամանակ օգտագործում էին ասորական գիրը: Գրելու այս եղանակը հայտնի է *գարշունի* անվանումով:

Ասորերենով խոսողների թվի կտրուկ նվազումն ու այդ լեզվի գործածության ոլորտի նեղացումը հանգեցնում են այն բանին, որ VIII դարում սկսվում է ասորական, հատկապես հակոբիկների, գրականության անկումը, սակայն մինչև XIII դարը դասական ասորերենը շարունակում է մնալ գրական ստեղծագործության լեզու: Այս դարը տալիս է ասորական դասական գրականության թերևս ամենափայլուն ներկայացուցիչն՝ Գրիգոր Բար Էվրայային, որը հայտնի է նաև Աբուլ-Ֆարաջ արաբական անունով:

Բար Էվրայան ծնվել է 1226 թվականին Մալաթիայում, հակոբիկյան քրիստոնեություն ընդունած հրեա բժշկի ընտանիքում, ինչով էլ բացատրվում է նրա Բար Էվրայա՝ «հրեայի որդի» մականունը: Սկսելով բժշկություն ուսումնասիրել՝ նա չի սահմանափակվում այդ ոլորտով և աստիճանաբար կուտակում է հիրավի հանրագիտարանային գիտելիքներ, ճերմաշյալ հայերենի իմացությունը: Նվիրվելով հոգևոր գրադմուսքին՝ Բար Էվրայան երիտասարդ տարիքում դառնում է եպիսկոպոս և զբաղեցնում եկեղեցական բարձրաստիճան մի շարք պաշտոններ: Նա աչքի է ընկնում լայնախոհությամբ, ճեստորականների հանդեպ հանդուրժողականությամբ ու հարգանքով, ինչը շատ հազվագյուտ երևույթ էր միջատարական լարված հարաբերություններում:

Բար Էվրայան թողել է գրական շատ մեծ ժառանգություն, որը ներառում է փիլիսոփայական, աստվածաբանական, պատմական, լեզվաբանական և գեղարվեստական գործեր: Նրա՝ թերևս ամենահայտնի ստեղծագործությունը «Չվարճալի պատմվածքների գիրքն» է, որը մինչև օրս շարունակում է քարգմանվել աշխարհի տարբեր լեզուներով:

Գիտելիքների, առաքինության ու լայնախոհության շնորհիվ Բար Էվրայան վաղից էր հանրաճանաչ սեր ու հարգանք, և նրա մահը 1286 թվականին Իրանի Մարաղա քաղաքում սգում էին ոչ միայն հակոբիկները, այլև նեստորականներն ու հայերը:

XIII դարից հետո դասական ասորերենը դադարում է նաև ակտիվ գրական

ստեղծագործության լեզու լինելուց և շարունակում է գործածվել լոկ որպես ծիսական լեզու Ասորի ուղղափառ (հակոբիկյան), Արևելքի (նեստորական), Ասորի կաթոլիկ, Քաղղեական, Մալաթարի և Մարոնական եկեղեցիների կողմից: Այս եկեղեցիները հավաքականորեն հայտնի են որպես «ասորական ավանդույթի» եկեղեցիներ:

ԱՐԱՄԵՐԵՆՆ ԱՅՍՕՐ: Չնայած համատարած արաբացմանը՝ ասորիների որոշ խմբերի հաջողվեց ոչ միայն մնալ քրիստոնյա, այլև կենդանի պահել նախնիների լեզուն: Հետաքրքրական է, որ մեր թվարկության սկզբին գոյություն ունեցած արամեական հիմնական երեք բարբառներն էլ այսօր ունեն կենդանի շառավիղներ, որոնք գիտական գրականության մեջ կոչվում են «նոր արամեական բարբառներ»: Թեև դրանք բոլորն էլ հիմնականում պահպանել են արամեական բառապաշարը, սակայն քերականության տեսանկյունից զգալիորեն հեռացել են սեմական լեզուներին բնորոշ քերականական կառուցվածքից: Այս առումով նոր արամեական բարբառները համեմատելի են երովպական արդի սեմական լեզուների հետ:

Արևմտյան կամ սիրիա-պաղեստինյան արամեական բարբառը պահպանվել է Դամասկոսի մերձակայքում գտնվող Մաալուլա, Բախասա և Ջուրբադին գյուղերում: Մաալուլայի բնակիչները մեկը (հույն-կաթոլիկ) քրիստոնյաներ են, իսկ մյուս երկու գյուղերը մահմեդաբնակ են: Այս բարբառի բառապաշարը, հնչյունական համակարգն ու քերականությունը կրել են և շարունակում են կրել արաբերենի ուժեղ ազդեցությունը:

Դասական ասորերենի հիմքում ընկած կենտրոնական արամեական բարբառի ժառանգը տարածված է Թուրքիայի հարավարևելյան Մարդին քաղաքի հարևանությամբ գտնվող Տուս-Արդին շրջանում, որը պատկանում է դասական ասորերենի բնօրրան Հյուսիսային Միջագետքին: Այս լեզուն, որով խոսողներն առավելապես հակոբիկ ասորիներ են, հիմնականում հայտնի է *տուրդոյ* («եռնային»), ինչպես նաև *տորանի* և *սուրդոյ* (կամ *սուրդոյո*) անուններով: Վերջինը հատկապես հետաքրքրական է, քանի որ նույն ինքը դասական ասորերենի *սուրյայա* բառն է: Տուրդայխոս ասորիներն իրենց կոչում են *ասարգի* կամ *սուրյոյե*:

Մինչև 1915 թվականը Տուս-Արդինում, որտեղ կենտրոնացած են մեծ թվով ասորական եկեղեցիներ ու վանքեր, և Արևմտյան Հայաստանի հարակից շրջաններում, հատկապես Վանի վիլայեթում բնակվում էին տասնյակ հազարավոր ասորիներ: Սակայն Սեծ եղեռնից հետո, որի զոհերը հայերի հետ մեկտեղ դարձան նաև ասորիները, վերջիններիս թիվը մշված շրջաններում կտրուկ նվազեց:

Տուս-Արդինից դուրս՝ արաբական երկրներում բնակվող հակոբիկ ու կաթոլիկ ասորիները, որպես կանոն, չեն տիրապետում տուրդոյին և արաբախոս են: Թեև արաբները նրանց կոչում են *սյրյանի*, այսինքն՝ ասորի, շատ հաճախ այդ բառին տրվում է ոչ այնքան ազգային, որքան կրոնահամայնքային պատկանելության իմաստ: Ինչպես և արաբական երկրներում բնակվող այլ արաբախոս քրիստոնյաներին, ասորիներին հաճախ դիտում են որպես քրիստոնյա արաբների:

Հայտնի է տուրդոյի յոթ բարբառ, որոնցից հիմնականը Միդյաթ ավանի *միդոյո* կոչվող բարբառն է: Մյուսներն են *միդոյո*, *բիարգոյո*, *իվարնոյո*, *նիլոյո* և *նաիբոյո* բարբառները: Յոթերորդը, որը կոչվում է *միախոս*, տարածված է եղել Դիարբեքի մերձակայքի երկու գյուղերում և XX դարի 90-ականների վերջերից չունի կենդանի կողմեր: Միախոսն բավականին տարբերվում է տուրդոյի մյուս վեց բարբառներից և երբեմն

դիտվում է որպես առանձին լեզու: Այն ավելի մոտ է դասական ասորերենին, և արաբական, քուրդական ու քրդական փոխառությունները դրանում ավելի քիչ են:

XIX դարի 80-ական թվականներին արևմտյան քարոզիչները փորձում էին սերտոյի միջոցով գրի առնել տուրքոյն, սակայն այդ լեզվին այդպես էլ չհաջողվեց վերածվել գրական լեզվի: Դրան խոչընդոտող գործոններից է մասնավորապես Տուս-Արդիինից ասորիների մասսայական արտագաղթը (հիմնականում դեպի Գերմանիա ու Շվեդիա, ինչպես նաև Միդիա և Լիբանան), որին նպաստում է չճանաչված ազգային փոքրամասնությունների հանդեպ թուրքալիքի քաղաքականությունը:

Տուրքոյն գրական լեզվի վերածելու ևս մեկ փորձ արվեց 1980-ականներին Շվեդիայում, որտեղ օրենսդրորեն պահանջվում է, որ ազգային փոքրամասնությունների երեխաները հնարավորություն ունենան կրթվելու մայրենի լեզվով: Լեզվաբան Յուսուֆ Իսհակի կողմից մշակված լատինատառ այբուբենով հրատարակվեց տուրքոյի “Toxu Qorena” («Եկե՛ք կարդանք») դասագիրքը, ինչպես նաև շվեդերեն-տուրքոյ բառարանը, սակայն տուրքոյն գրական լեզվի վերածելու այս ջանքերը ևս հաջողություն չունեցան:

Արևելյան կամ բաբելոնյան արամեերենի կենդանի շտապիլը հիմնականում տարածված է Իրաքում և Իրանի հյուսիս-արևմուտքում՝ Ուրմիա լճի շրջակայքում, և ունի բազմաթիվ բարբառներ: Դրանցով խոսողների մի մասը նեստորական, մյուսը՝ կաթոլիկ ասորիներ են (քաղղեսացիներ): Սրանց պետք է ավելացնել նաև, այսպես կոչված, «քրդական» կամ «ասորական» հրեաներին, որոնք բնակվելիս են եղել Իրաքի Մոսուլ քաղաքից դեպի հյուսիս գտնվող Ջախո քաղաքում ու նրա շրջակայքում, սակայն XX դարի կեսերից գրեթե ամբողջությամբ ներգաղթել են Իսրայել: Այս հրեաների բարբառը, որը շատ մոտ է քաղղեսացիների բարբառին, հայտնի է *ճաշ-դիզան* և *զախո* անվանումներով, իսկ արաբներն այն կոչել են *ջարալի* («լեռնային»): Իրենք հրեաներն իրենց լեզուն կոչել են նաև «Թարգումի լեզու»:

Հյուսիսային Իրաքից բացի, հրեաները բնակվել են նաև Իրանի Ռեզայն քաղաքից դեպի հյուսիս ընկած շրջաններում, ուր խոսել են արևելյան ասորերենի սալամասյան բարբառով: 1828 թվականի ռուս-պարսկական պատերազմից հետո այս հրեաների մի մասը հաստատվել էր Անդրկովկասում, ուր հայտնի է եղել *լախուլիներ* անունով:

Եվս մեկ կրոնաէթնիկական խումբ, որը խոսել է արդի արևելաարամեերենով, Իրաքի հարավում ու Իրանի Խուզիստան նահանգում բնակվող մանդեականներն են, որոնք այսօր ավելի հայտնի են որպես «աաբիներ»: Մինչև XX դարի կեսերը սաբիների խոսակցական լեզուն եղել է ասորերենի *նասորայա* բարբառը, սակայն XX դարի վերջին սաբիները գրեթե ամբողջությամբ եղել են արաբախոս ու պարսկախոս, թեև շարունակում են գործածել արամեերենն ու մանդեական գիրը ծիսական նպատակներով:

XIX դարի երկրորդ կեսին ամերիկացի քարոզիչների ջանքերի շնորհիվ արդի արևելաարամեերենի Ուրմիայի բարբառով, նեստորյան գրով սկսեց գրականություն հրատարակվել: Արդյունքում արդի արևելաարամեերենը, ի տարբերություն մյուս երկու կենդանի արամեական բարբառների, բարձրացավ գրական լեզվի մակարդակի և կարող է համարվել արդի գրական ասորերեն կամ, ավելի ստույգ, արդի գրական արևելաարամեերեն: Արդի ասորերեն (Modern Syriac, Neo-Syriac) անվանումը երբեմն գործածվում է լեզվաբանների կողմից, թեև արդի արևելաարամեերենը ոչ դասական ասորերենի կիսբուն ընկած կենտրոնական արամեական բարբառի և ոչ էլ, առավել ևս, դասական ասորերենի ժառանգն է, այլ, ինչպես նշվեց, բաբելոնյան արամեերենի:

Արևելյան ասորիների ընդհանուր քանակի մասին ստույգ տվյալներ չկան, իսկ մոտավոր քիվը 350 հազար է: Իրաքից և Իրանից դուրս նրանք բնակվում են ԱՄՆ-ում, Եվրոպայում, Ավստրալիայում ու նախկին խորհրդային հանրապետություններում: Վերջիններում, այդ թվում՝ Հայաստանում բնակվող ասորիները հիմնականում հարուն են Ռուս ուղղափառ եկեղեցուն, քանի որ նրանց նախնիներն Իրանից Ռուսական կայսրություն տեղափոխվելու բուլլայություն ստանալու համար ստիպված էին հրաժարվել նեստորականությունից և ընդունել Ռուս ուղղափառ եկեղեցու դավանանքը: Բռնի ռուսականացման քաղաքականությամբ է բացատրվում նաև ասորիների այս հատվածի մոտ ռուսական անունների ու ռուսականացված ազգանունների (ինչպես, օրինակ՝ Մուրադով, Թամբազով, Յակուբով, Ադասիև, Ալավերդով և այլն) տարածված լինելը: XX դարի 90-ական թվականներից սկսած՝ «ռուս ուղղափառ» ասորիների միջավայրում նկատելի է դեպի նեստորականություն վերադառնալու որոշ միտում, ինչին նպաստում է Արևելքի եկեղեցու համապատասխան ակտիվ գործունեությունը:

Նեստորականների մոտ XIX դարի վերջից սկսեց տարածվել նրանց ասորեստանյան ծագման գաղափարը: Սրա հետևում ամերիկացի քարոզիչներն էին, որոնք, չունենալով սեմագիտական բավարար գիտելիքներ, շտապեցին արամեախոս նեստորականներին հայտարարել հին ասորեստանցիների շտապիլներ: XX դարի առաջին տասնամյակներում որպես նեստորական ասորիների ինքնանվանում հաստատվում է *ասորալի*՝ «ասորեստանցիներ» բառը, որն աստիճանաբար փոխարինում է նրանց նախկին *սորոլի* ինքնանվանմանը: Այստեղ տեղից է նշել, որ դասական ասորերենում «Աթուր» էր կոչվում ոչ միայն հին Ասորեստանը, այլ նաև Մոսուլ քաղաքի նահանգն ու Մոսուլի թեմը, այսինքն՝ այն տարածքը, որը մինչև օրս ասորիների խոշորագույն ազգային օջախն է: Հետևաբար, միջնադարի քրիստոնյա ասորիներն *ասորայա* ասելով նկատի ունեին «Աթուրում բնակվող ասորի՝ աթուրեցի» և ոչ թե «ասորեստանցի», քանի որ ասորեստանցի համարվելը նրանց համար նույնչափ, եթե ոչ ավելի անընդունելի պետք է լիներ, քան արամեացի, ասել է թե՛ հեթանոս:

Ասորեստանյան վարկածը, դառնալով նեստորականների ազգային հպարտության առարկան, միևնույն ժամանակ առաջացրեց նրանց արամեական լեզվին ու արամեական հարուստ հոգևոր ժառանգությանն ասորեստանյան հավակնությունների կողքին տեղ գտնելու խնդիրը, որին ցայսօր համոզիչ լուծում չի գտնվել: Եվ թեև նեստորական ասորիներին այսօր առավելապես կոչում են ասորեստանցիներ, իսկ նրանց լեզուն՝ արդի ասորեստաներեն, սեմագիտների ճնշող մեծամասնությունը չի ընդունում նրանց ասորեստանցի լինելը՝ դիտելով նրանց որպես արամեացիներ:

Այսօր նեստորականների և հակոբիկների շրջանում գործում են մտավորական և քաղաքական խմբավորումներ, որոնք մերժում են ինչպես ասորեստանցի, այնպես էլ ասորի անվանումները և նախընտրում են կոչվել արամեացիներ՝ դրանում տեսնելով ասորի ժողովրդի բոլոր զանգվածների ազգային միասնության գրավականը: Այդուհանդերձ, նշված երեք բարբառների կրողների մոտ միևնույն ազգին պատկանելու գիտակցությունը շարունակում է թույլ արտահայտված մնալ:

Ինչպես և անցյալում, այսօրվա ասորիներին քիչ թե շատ միավորողը շարունակում է մնալ ոչ այնքան ընդհանուր արամեական ծագումը, որքան նրանց բոլորի եկեղեցիներում այս կամ այն ծավալով հնչող դասական ասորերենը, թեև յուրաքանչյուր ասորական համայնք յուրովի է հնչեցնում այն: Տարբեր է նաև ազգային կյանքում դասա-

կան ասորերենին հատկացվող տեղի ծավալը: Նեստորականները, թվում է, ավելի մտա-
հոգված են արդի գրական ասորերենի պահպանմամբ ու զարգացմամբ: Հակորիկներն
ու կաթոլիկներն ավելի մեծ տեղ են հատկացնում դասական ասորերենին: Այն դասա-
վանդվում է նրանց կիրակնօրյա դպրոցներում, դրանով երգեր են գրվում, հրատարակ-
վում են մանկական գրքեր, մույնիսկ որոշ փորձեր են արվում վերադարձնել դասական
ասորերենը խոսակցական ոլորտ:

Որոշակի հետաքրքրվածություն դասական ասորերենի հանդեպ կա նաև մարո-
նիների մոտ, որոնց համար ևս այս լեզուն, արաբերենի հետ մեկտեղ, շարունակում է ծի-
սական մնալ: Մարոնական մտավորականության այն հատվածում, որն այս կամ այն
չափով պահպանում է ասորական ինքնագիտակցություն, հետաքրքրությունն այս լեզվի
նկատմամբ մեծ է: Ասորերենը դասավանդվում է լիբանանյան մի քանի համալսարան-
ներում, երկրում գործում է Ասորերեն լեզվի բարեկամների ընկերակցություն, որն զբաղ-
վում է ասորերենի քարոզչությամբ ու հրատարակչական գործունեությամբ:

Թեև Արևմտյան Հայաստանի տարածքում ասորիները բնակվել են հնագույն
ժամանակներից, իսկ Եղեւսիան հայերի կողմից մույնիսկ ընկալվում է որպես Արևմտյան
Հայաստանի մի մաս, Հայաստանում այսօր բնակվող մոտ ութ հազար ասորիները 1828
թ. ռուս-պարսկական պատերազմից հետո Իրանից Արևելյան Հայաստան տեղա-
փոխվածների հետնորդներն են: Չնայած հայ-ասորական ամուսնությունների մեծ թվին
(այս երևույթը, ի դեպ, տարածված է նաև արտասահմանում, ուր հայերն ու ասորիները
հաճախ բնակվում են կողք կողքի)՝ ասորիներին Հայաստանում ձուլման անմիջական
վտանգ չի սպառնում, և ասորիները շարունակում է լայնորեն գործածվել: Հայաստանը
նախկին խորհրդային հանրապետություններից միակն է, ուր ասորական գյուղերում
արդի ասորերենն ընդգրկված է միջնակարգ դպրոցների ուսումնական ծրագրերում, թեև
դրա դասավանդման որակը կարոտ է բարելավման:

Հայաստանում ասորերենի պահպանման ու զարգացման պետական ծրագրի
կարիք է զգացվում: Այն մասնավորապես պետք է նախատեսի արդի ասորերենի որակ-
յալ ուսուցիչների ու մասնագետների պատրաստում և ասորական ռադիոդրագրերի
կազմակերպում: Հայաստանցի ասորիներին պետք է «վերադարձվի» նաև նրանց հո-
գևոր ու մտավոր ժառանգության կարևորագույն մասը համդիսացող դասական ասորե-
րենը, որից նրանք բռնի ռուսականացման քաղաքականության հետևանքով արհեստա-
կանորեն կտրված են եղել:

Հայաստանը միակ պետությունն է, որ Միավորված ազգերի կազմակերպության
բարձր ամբիոնից մտահոգություն է հնչեցրել իրենց պատմական հայրենիքում ասորի-
ների ճակատագրի վերաբերյալ: Սա նշանակում է, որ Հայաստանում կա այն գիտակ-
ցությունը, որ ասորիների և նրանց լեզվի ու մշակույթի պաշտպանությունը հայ ժողո-
վրդի ու հայկական պետության պատմական ու բարոյական պարտականությունն է:

ՆԵՐԱԾԱԿԱՆ ՄԱՍ

Ասորական գիրն ու Հնչյունական Համակարգը





Ա

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԱՍՈՐԱԿԱՆ ԳՐԻ ՄԱՍԻՆ

Ա.1. Ինչպես նշվեց նախաբանում և ասորերենի պատմությանը նվիրված ակնարկում, գոյություն ունի ասորական երեք տառատեսակ՝ *Էստրանգելո* (կամ *Էստրանգելա*, հունարեն *εστρογγύλη* «կլոր» բառից), *սեբոտ* (ասորերեն «գիծ» բառից), որը հայտնի է նաև որպես «ժակորիկյան գիր», և *մեստորյան*: Այս երեք տառատեսակներից հնագույնը Էստրանգելոն է, որից և առաջացել են մյուս երկուսը:

Սերտո տառատեսակը ներկայումս գործածում են Սիրիայի, Լիբանանի և Թուրքիայի հակորիկները, ասորի կաթոլիկներն ու մարոնիները, որոնց համար դասական ասորերենը շարունակում է մնալ ժխական լեզու:

Նեստորյան գիրը գործածում են Իրաքում, Իրանում, Հայաստանում և այլուր բնակվող մեստորացի, քաղղեսացի և ուղղափառ ասորիները, որոնց ժխական լեզուն նույնպես դասական ասորերենն է: Նեստորյան տառատեսակը նաև արդի գրական ասորերենի գիրն է:

Ի տարբերություն այս երկուսի՝ Էստրանգելոն չունի դավանական և համայնքային երանգավորում և հանդիսանում է «ասորական ավանդույթի» բոլոր համայնքների համար ընդհանուր՝ «չեզոք» տառատեսակ: Իր դեկորատիվ տեսքի շնորհիվ Էստրանգելոն հաճախ գործածվում է սերտոյագիր և մեստորագիր ձևազերծում ու գրքերում՝ որպես վերնագրերի և թվանիշների տառատեսակ: Էստրանգելոյով հրատարակվում են ասորերեն լեզվի գիտական և ուսումնական ձեռնարկներ, դասական գրականության ժողովածուներ և առանձին գրական մուշններ:

Մույն դասագրքում առավելապես գործածվելու է սերտոն, սակայն մյուս երկու տառատեսակներին ևս տրվելու է պատշաճ ուշադրություն, քանի որ դասական ասորերենին տիրապետումը ենթադրում է բոլոր երեք տառատեսակների հավասար տիրապետում:

Ա.2. Ինչպես սեմական լեզուների մեծամասնության, ասորական գրի ուղղությունը ևս աջից ձախ է: Ասորատառ գրքերի կոնակներն աջ կողմից են, և գրքերը թերթվում են ձախից աջ ուղղությամբ:

Ա.3. Ասորական այբուբենն ունի 22 տառ, որոնցով նշվում են բաղաձայններն ու ձայնավորների մի մասը: Մյուս ձայնավորները նշվում են հատուկ նշաններով՝ *ձայնանիշերով*, որոնք սերտոյի պարագայում հիմնականում նմանեցված են հունական այբուբենի համապատասխան տառերին, իսկ մեստորյան գրում կազմված են գծիկներից ու կետերից: Նեստորյան ձայնանիշերն առաջացել են Էստրանգելո տառատեսակի ձայնանիշերից, որոնք, սակայն, ունեն շատ սահմանափակ գործածություն, և Էստրանգելոն, որպես կանոն, հանդես է գալիս առանց ձայնանիշերի, ինչը զգալիորեն բարդացնում է այս տառատեսակով տպված տեքստերի ընթերցումը¹:

Ա.4. Բացի ձայնանիշերից, գոյություն ունեն քերականական ու արտասանական երևույթներ նշող բազմաթիվ նշաններ: Մրանց նշանակությունը հատկապես մեծ է Էստրանգելոյի պարագայում, որը, ինչպես նշվեց, հազվադեպ է հանդես գալիս ձայնանիշերով:

Ա.5. Ասորական գիրը կուրսիվային է, այսինքն՝ տառերը, որոշ բացառություններով, կապակցվում են իրար հետ: Միևնույն տառը կարող է ունենալ գրության մի քանի ձև՝ ելնելով նրանից՝ կապակցվում է այն նախորդող և հաջորդող տառի հետ, թե ոչ: Այսպես՝ բոլոր տառերը կապակցվում են աջից՝ նախորդող տառի հետ, սակայն ձախից հաջորդող տառի հետ կապակցվում են միայն տասնչորսը:

Ա.6. Ասորական տառերը չեն բաժանվում մեծատառերի և փոքրատառերի, իսկ տարբերությունը տպագիր ու ձեռագիր տառերի միջև աննշան է: Հետևաբար, գեղեցիկ ձեռագիր մշակելու համար անհրաժեշտ է գրելիս ձգտել որքան հնարավոր է ճիշտ վերարտադրել տպագիր տառը: Ասորական գիրը չի ենթարկվում տողադարձի:

Ա.7. Ասորերեն լեզուն ունի կետադրության իր ուրույն համակարգը, որը կներկայացվի ներածական մասի Ը դասում: Այդ համակարգը, սակայն, միասնականացված չէ և տարբերվում է ձեռագրից ձեռագիր, գրքից գիրք, տառատեսակից տառատեսակ, համայնքից համայնք: Ներկայումս գործածվում են նաև եվրոպական կետադրական նշանները, որոնցից մի քանիսը, մասնավորապես ստորակետն ու հարցական նշանը, գործածվում են «չրջված» տեսքով (, ?): Մույն դասագրքում հիմնականում գործածված են եվրոպական նշանները, սակայն եզրափակիչ դասերում և ընթերցարանի որոշ տեքստերում ասորական ավանդական կետադրությունը պահպանված է:

¹ Ելնելով ուսումնական անհրաժեշտությունից՝ մույն դասագրքի մի քանի դասերում Էստրանգելոն ձայնավորված է սերտոյի ձայնանիշերով, ինչն ասորական ձեռագրերում գրեթե չի պատահում: Ավելի տարածված է Էստրանգելոյի ձայնավորումը մեստորյան ձայնանիշերով:



Բ

ՉԱՅՆԱՎՈՐՆԵՐ ԵՎ ՉԱՅՆԱՆԻՇԵՐ

Բ.1. Գասական ասորերենն ունի հինգ ձայնավոր՝ «ա», «է», «փ», «օ», «ու», որոնք նշվում են համապատասխան ձայնանիշերով կամ տառերի ու ձայնանիշերի կապակցություններով:

Բ.2. «Ա» ձայնավորը նշվում է երկու տարբեր ձայնանիշերով: Սա պայմանավորված է նրանով, որ արամեական վաղ բարբառներում միևնույն ձայնավորը կարող էր լինել երկար ու կարճ: Չայնանիշերի ստեղծման ժամանակաշրջանում ձայնավորներն այլևս չէին տարբերակվում ըստ երկարության, սակայն «ա» ձայնավորի համար ստեղծվում է երկու ձայնանիշ: Այսպես՝ «ա» ձայնավորը, որն անցյալում եղել է երկար, նշվում է *զկաֆա* կոչվող ձայնանիշով¹ (կրորակը պայմանականորեն նշում է տառը):



Ինչպես երևում է պատկերից, զկաֆա ձայնանիշը կարող է դրվել ինչպես տառի վերևում (որպես կանոն), այնպես էլ ներքևում: Ընթերցելիս մախ՝ արտասանվում է տառը, ապա՝ ձայնանիշով արտահայտված ձայնավորը:

Բ.3. «է» ձայնավորը նշվում է *ռվասա* կոչվող ձայնանիշով, որը նույնպես կարող է դրվել ինչպես տառի վերևում, այնպես էլ ներքևում:



Պատկերից պարզորոշ երևում է, որ ռվասա ձայնանիշն ընդօրինակում է հունական այբուբենի ε տառը:

¹ Այս ձևով հինգերորդ դարում հայտնի էր հայերենի «ա» տառը:

² Հակոբիկներն ու մարտիրոսը զկաֆա ձայնանիշն ավանդականորեն հնչեցնում են որպես «օ», ինչը գիտական տեսանկյունից սխալ է:

ԲԱՂԱՉԱՅՆՆԵՐ¹

ԱԼԱՖ

Բ.4. Այս տառն ունի գրության երկու ձև՝ անջատ շկապակցված և կապակցված աջից: Բառակազմում շկապակցված ալաֆ-ը ունի հետևյալ տեսքը.



Բ.5. Բառամիջում և բառավերջում շկապակցված ալաֆ-ը սովորաբար կորցնում է կորությունը և ստանում հետևյալ տեսքը.



Բ.6. Աջից կապակցված ալաֆ-ը ունի հետևյալ տեսքը.



Բ.7. Ալաֆ-ը ինքնուրույն որևէ հնչյուն չի նշում և հիմնականում հանդես է գալիս որպես հենարան ձայնանիշի համար՝ նշելով ցանկացած ձայնավոր: Այսպես՝ ալաֆ-զկաֆա կապակցությունը՝



ընթերցվում է «ա», իսկ ալաֆ-ռվասա կապակցությունը՝



ընթերցվում է «է»:

Բ.8. Ալաֆ տառը պատկանում է, այսպես կոչված, «կոկորդայինների» խմբին: Արամեական վաղ բարբառներում այն նշում էր սեմական լեզուներին բնորոշ կոկորդային հնչյուն՝ այսպես կոչված, «կոկորդային պայթյուն» (glottal stop): Կոկորդային պայթյունն իրենից ներկայացնում է ձայնալարերի մակերեսային արագ կծկում, որի արդյունքում արտաբերվում է գերկարճ «ը» ձայնավոր հիշեցնող հնչյուն: Գասական ասորերենում կոկորդային պայթյունը գրեթե ամբողջությամբ վերացել է և լսելի է միայն որոշ դեպքերում, առավելապես բառամիջում՝ առաջացնելով խոսակցական հոսքի ընդհատում, որը հայերեն գրադարձության մեջ նշվելու է ապաքարցով ('):

¹ Տառերը ներկայացվում են ըստ այբբենական կարգի:

Բ.17. Տառի չկապակցված անջատ գրությունն ունի հետևյալ տեսքը.



Ինչպես և ալաֆ-ը, դալաբ-ը կապակցվում է միայն աջից և ստանում հետևյալ տեսքը.



Ուշադրություն դարձրեք, որ կապակցված դալաբ-ը ավելի փոքր է, քան անջատը.




Բ.18. Դալաբ տառով նշվում է երկու բաղաձայն՝ պայթական «ո» (բառասկզբում և բառամիջում՝ բաղաձայնից հետո) և անզերենի «this» բառի շփական ձայնեղ «th» հնչյունը (ձայնավորից հետո): Սակայն «th» հնչյունի արտաբերումը չի կրում պարտադիր բնույթ, և տառը բոլոր դիրքերում կարելի է արտաբերել որպես «ո»:

Բ.19. Ուշադրություն դարձրեք դալաբ տառի գրությանը կուշշայա-ի («ո») ու ռուքրախա-ի («th») հետ.



Ը Կարդացե՛ք, ապա արտագրե՛ք՝ փորձելով հնարավորինս միշտ վերարտադրել տպագիր տառերը.




Բ.9.



Գ

ՉԱՅՆԱՆԻՇԵՐ

Գ.1. Բացի զկաֆա ձայնանիշից և զկաֆա-ալաֆ (i') կապակցությունից, «ա» ձայնավորը կարող է նշվել պտախա կոչվող ձայնանիշով, որն ունի հետևյալ տեսքը.



Ինչպես պարզորոշ երևում է, ձայնանիշը սխեմատիկ կերպով ընդօրինակում է հունարենի Α տառը:

Գ.2. Պտախա ձայնանիշով նշվում է այն «ա» ձայնավորը, որը լեզվի ավելի վաղ շրջաններում եղել է կարճ: Հետագայում քանակական տարբերությունը երկու «ա» ձայնավորների միջև վերացել է, և երկու ձայնանիշերն էլ, փաստորեն, արտահայտում են միևնույն «ա» հնչյունը: Սա, սակայն, չի նշանակում, որ «ա» ձայնավոր նշելու համար կարելի է կամայականորեն գործածել երկու ձայնանիշերից ցանկացածը: Որպես ընդհանուր սկզբունք պետք է նկատի ունենալ, որ փակ, այսինքն՝ բաղաձայնով ավարտվող վանկերում, որպես կանոն, դրվում է պտախա, իսկ ձայնավորով ավարտվող բաց վանկերում՝ զկաֆա: Այսպես, օրինակ՝ ԳԱԳա բառում առաջին վանկը փակ է, ուստի նրանում դրված է պտախա. երկրորդ վանկը բաց է, ուստի նրանում դրված է զկաֆա:

Գ.3. Որոշ դեպքերում, ինչպես, օրինակ՝ ԳԳա բառում, զանալ-պտախա-ին հաջորդող դալաբ-ը ունի զկաֆա, ինչը զանալ-պտախա-ով կազմված վանկին տալիս է բաց վանկի տեսք՝ ԳԱ-դա: Նման դեպքերում վանկը փակվում է հաջորդող բաղաձայնի (այս դեպքում՝ դալաբ-ի) կրկնությամբ, և բառն արտասանվում է գադդա (գադ-դա): Համեմատե՛ք ԳԳա տարբերակի հետ, ուր զանալ տա-

ռի զկաֆա-ն փակ վանկ չի պահանջում, և կրկնակ բաղաձայնի կարիք չի առաջանում¹:

Գ.4. Երկակի՝ պայթական-շփական արտասանություն ունեցող բաղաձայնները (քեք, գամալ, դալաք և այլն) կրկնավորվելիս հանդես են գալիս միայն պայթական տարբերակով («բբ», «գգ», «դդ»): Հետևաբար, եթե յի՛ բառն արտասանության բոլոր կանոնները պահպանելու դեպքում պետք է հնչի *qawthaw*, ապա յի՛ բառը՝ *qawthaw*: Պետք է նկատի ունենալ, որ ասորերենը չունի հատուկ նշան բաղաձայնի կրկնավորումը նշելու համար, սակայն որոշ դեպքերում կրկնավորում կարող է հուշել կուշշայա կետը (յի՛):

Գ.5. Այս օրինակավորությունները չունեն բացարձակ բնույթ, և գոյություն ունեն բազմաթիվ բացառություններ: Այսպես՝ բառասկզբի ալաֆ-ի վրա հիմնականում դրվում է պտախա, սակայն հաջորդող բաղաձայնը կարող է չկրկնավորված մնալ՝ *la w-paw*: Հարկ է նշել, որ ձայնահիշարությունը դասական ասորերենում երբեմն պայմանավորված է լինում լեզվի պատմության ավելի վաղ շրջանի հնչյունական առանձնահատկություններով, որոնք դասական ժամանակաշրջանում այլևս նկատելի չեն եղել:


ՇԵՇՏԱԳՐՈՒՄ

Գ.6. Դասական ասորերենի շեշտադրության հարցը մնում է վիճելի: Սույն դասագրքում ընդունված է վերջին վանկը շեշտելու սկզբունքը, սակայն չորսից ավելի վանկ ունեցող բառերում կարելի է շեշտել նախավերջին վանկը²:

ԲԱՂԱՉԱՅՆՆԵՐ

ՀԵ


Գ.7. Այս տառի չկապակցված անջատ գրությունն ունի հետևյալ տեսքը: Գրվում է նախ տառի աջ կողմի պոչիկը (վերևից ներքև), ապա՝ ժամացույցի սլաքի ուղղությամբ՝ կլորակը.



¹ Դասական բերականությանը պահանջվող բաղաձայնի այսպիսի կրկնավորումը, որը, դիտարկված օրինակությունից բացի, դրսևորվում է նաև մի քանի այլ դեպքերում, չի պահպանվում հակաթիվների ու մարոնիների մոտ ընդունված ավանդական արտասանության մեջ: Հետևաբար յի՛ բառը կրճրեցովի *qawto*, իսկ յի՛ բառը՝ *qawto* (զկաֆա ձայնահիշի «օ» արտասանելու մասին տե՛ս Բ.2. պարբերության տողատակը):


² Աստուրականներն ու քաղցանցիները արդի ասորերենի ազդեցությամբ, որպես կանոն, միշտ շեշտում են նախավերջին վանկը:

Տառը կապակցվում է միայն աջից.



Հե տառով նշվում է «h» բաղաձայնը¹:


ܗ Կարդացե՛ք, ապա արտագրե՛ք՝ փորձելով հնարավորինս միշտ վերարտադրել տպագիր տառերը.




¹Գ.3. ²Գ.5.

ՈՒՆՈՒ

Գ.8. Տառի չկապակցված անջատ գրությունն ունի հետևյալ տեսքը.




Տառը կապակցվում է միայն աջից՝ ստանալով հետևյալ տեսքը.



Ունու տառով նշվում են «ո» և «ու» ձայնավորները, ինչպես նաև անգլերենի «w» հնչյունը, որն ասորերենում դասվում է բաղաձայնների թվին և հայկական տառադարձության մեջ նշվում է վյուն-ով (Ի, ւ):

Գ.9. «Օ» ձայնավորի դեպքում տառի վերևում դրվում է կետ.



¹ Հունական փոխառություններում հե-ով երբեմն նշվում են հունական α և ε ձայնավորները:

Գ.10. Կետով ուսու տառը հանդիպում է միայն բառամիջում և բառավերջում: Բառասկզբի «օ» ձայնավորը նշվում է ձև կապակցությամբ¹:

Գ.11. «Ու» ձայնավորի դեպքում ուսու տառի կամ, ավելի հազվադեպ, նրան նախորդող տառի վերևում դրվում է *ըստսա* կոչվող ձայնանիշը.



(օօ՛ օօ՛ օօ՛ օօ՛) օօ՛ օօ՛ օօ՛ օօ՛ ⇐

Գ.12. Ուսու-ըստսա կապակցությունը հանդիպում է միայն բառամիջում և բառավերջում: Բառասկզբի «ու» ձայնավորը նշվում է ձև կապակցությամբ:

Գ.13. Այսպիսով՝ ըստսա ձայնանիշը, բացի մի քանի բառերից, միշտ գործածվում է ուսու տառի հետ, ընդ որում՝ գրեթե միշտ դրվում է տառի վերևում:

Գ.14.1. Մյուս բոլոր դեպքերում ուսու տառը հնչում է որպես «ա»՝ կազմելով երկհնչյուններ՝ *օ ա, օ լէ, օ՛ ալ* և այլն: Գ.14.2. Ջկաֆա-ուսու և ուսու-զկաֆա կապակցությունները (*օ՛ .օ՛*), ինչպես նշվեց Գ.10. պարբերության տողատակում, արևմտյան ասորերենում ընթերցվում են «օ» և ոչ «աւ» կամ «աա»:

¹ *Կարդացե՛ք, ապա արտագրե՛ք՝ փորձելով հնարավորինս ճիշտ վերարտադրել տպագիր տառերը.*

↵
 ʾօօփ ʾօօ՛ ʾօօ՛ ʾօօ՛ ʾօօ՛ օօ՛
 ʾօօ՛
 ʾօօ՛ ʾօօ՛ ʾօօ՛ ʾօօ՛ ʾօօ՛ ʾօօ՛ ʾօօ՛ ʾօօ՛ ʾօօ՛ ʾօօ՛ ʾօօ՛ ʾօօ՛ ʾօօ՛ ʾօօ՛ ʾօօ՛

¹Գ.10. ²Գ.12. ³Գ.3. ⁴Գ.14.2.

¹ Մերոռոյագիր արևմտյան ասորերենում, որտեղ արևելյան ասորերենի «օ» ձայնավորը փոխարինվում է «ու» ձայնավորով, կետավոր ուսու իրականում գոյություն չունի, սակայն ավանդականորեն գործածվում է ասորերեն լեզվի ձեռնարկներում: «Օ» ձայնավորն արևմտյան ասորերենում հիմնականում հանդիպում է փոխառություններում և սովորաբար նշվում զկաֆա-ուսու կամ ուսու-զկաֆա կապակցություններով (*օ՛ .օ՛*): Այս կապակցությունները սույն դասագրքում գործածվելու են, ուստի դրանք ևս հարկ է ըստ պատշաճի յուրացնել:

Գ.15. Տառի չկապակցված անջատ գրությունն ունի հետևյալ տեսքը.

— | —
 ʾ ʾ ʾ ʾ ʾ ʾ ⇐

Ջայն տառը կապակցվում է միայն աջից և ստանում հետևյալ տեսքը.


ʾ
 ʾ ʾ ⇐

Այս տառով նշվում է «զ» բաղաձայնը:

¹ *Կարդացե՛ք, ապա արտագրե՛ք՝ փորձելով հնարավորինս ճիշտ վերարտադրել տպագիր տառերը.*

↵
 ʾօօ՛
 ʾօօ՛ ʾօօ՛ ʾօօ՛ ʾօօ՛ ʾօօ՛ ʾօօ՛ ʾօօ՛ ʾօօ՛ ʾօօ՛ ʾօօ՛ ʾօօ՛ ʾօօ՛ ʾօօ՛ ʾօօ՛ ʾօօ՛

¹Գ.3.





Դ

ՉԱՅՆԱՆԻՇԵՐ

Դ.1. «Ի» ձայնավորը նշվում է խվասա կոչվող ձայնանիշով, որը կարող է դրվել ինչպես տառի վերևում, այնպես էլ ներքևում.




Ինչպես պարզորոշ երևում է, խվասա ձայնանիշն ընդօրինակում է հունարենի H տառը:


ԲԱՂԱՉԱՅՆՆԵՐ

ԽԵԹ

Դ.2. Տառի չկապակցված անջատ գրությունն ունի հետևյալ տեսքը.



Խեթ տառը կապակցվում է երկու կողմից՝ ստանալով հետևյալ տեսքը.



կապակցված երկու կողմից՝ Ս




կապակցված աջից՝ Ա



Դ.3. Խեթ տառը նշում է «խ» բաղաձայնը¹:


Ը Կարդացե՛ք, ապա արտագրե՛ք՝ փորձելով հնարավորինս ճիշտ վերարտադրել տպագիր տառերը.




Պ.3.

ՏԵԹ

Դ.4. Տառի չկապակցված անջատ գրությունն ունի հետևյալ տեսքը.



Տեթ տառը կապակցվում է երկու կողմից.



կապակցված երկու կողմից՝ Ս



կապակցված աջից՝ Ա



¹ Արևմտյան ասորերենում խեթ տառը հնչում էր որպես խոր կոկորդային «փ»:

Գ.5. Տեք տառով նշվում է «տ» բաղաձայնը, որը, ի տարբերություն հայերենի «տ»-ի, արտասանվում է ավելի լարված:

Ուրդացենք, ապա արտագրենք՝ փորձելով հնարավորինս ճիշտ վերարտադրել տպագիր տառերը.

⊞
 ԼՊՊՊ ԹԹԹԹ ԿԿԿԿ ԳԳԳԳ ԾԾԾԾ ԾԾԾԾ ԾԾԾԾ ԾԾԾԾ
 ԾԾԾԾ ԾԾԾԾ ԾԾԾԾ ԾԾԾԾ ԾԾԾԾ ԾԾԾԾ ԾԾԾԾ ԾԾԾԾ

ՅՈՒԴ (ՅՈՒԴ)

Գ.6. Տառի չկապակցված անջատ գրությունն ունի հետևյալ տեսքը.

⊞
 յ) ւօ ւօ ւօ ւօ ւօ ⊞

Յոդ տառը կապակցվում է երկու կողմից.

կապակցված ձախից՝ Կ
 Կ Կ Կ Կ Կ Կ Կ ⊞

կապակցված երկու կողմից՝ Կ
 Կ Կ Կ Կ Կ Կ Կ ⊞

կապակցված աջից՝ Կ
 Կ Կ Կ ⊞

Գ.7. Յոդ տառը նշում է «յ» բաղաձայնը՝ կազմելով երկինջյուններ, ինչպես, օրինակ՝ յ յա, յ յէ, յ յու, յ յօ, յ յյ և այլն:

Գ.8. Յոդ-խվասա կապակցությունը (՛) հնչում է «խ»:


Գ.9. Յոդ տառը հնչում է որպես «ի», երբ չունի ձայնանիշ, և նրան նախորդում է իսկառա ձայնանիշը՝ ՛ իի, օի, իի, յ ի:

Գ.10. Ռ-վասա-յոդ կապակցությունը (ւօ) հնչում է «է»: Այլ կերպ ասած՝ այս կապակցությունում յոդ-ը համը է:

Ուրդացենք, ապա արտագրենք՝ փորձելով հնարավորինս ճիշտ վերարտադրել տպագիր տառերը.

⊞
 ԱՊՊՊ ԹԹԹԹ ԿԿԿԿ ԳԳԳԳ ԾԾԾԾ ԾԾԾԾ ԾԾԾԾ ԾԾԾԾ
 ԾԾԾԾ ԾԾԾԾ ԾԾԾԾ ԾԾԾԾ ԾԾԾԾ ԾԾԾԾ ԾԾԾԾ ԾԾԾԾ
 ԾԾԾԾ ԾԾԾԾ ԾԾԾԾ ԾԾԾԾ ԾԾԾԾ ԾԾԾԾ ԾԾԾԾ ԾԾԾԾ

Պ.3. Ք.8.





Ե

«ՇՎԱ» ՀՆՉՅՈՒՆԸ

Ե.1. Ասորերենի հնչյունական համակարգն աչքի է ընկնում, այսպես կոչված, «անլիաձայնությամբ», այսինքն՝ ձայնավորների սղման կամ նեղացման միտումով: Չայնավորները հիմնականում սղվում կամ նեղանում են վերջածանցների կցման արդյունքում: Առկա է նաև պատմական ձայնագրկումը, երբ սկզբնապես լիաձայն բառը ժամանակի ընթացքում վերածվում է անլիաձայնի¹:

Ե.2. Ինչպես և հայերենում, ասորերենի անլիաձայնությունը դրսևորվում է ձայնավորների նեղացման արդյունքում առաջացած «ը» հնչյունով, որը կոչվում է շվա: Ի տարբերություն հայերենի ը-ի, որն այբուբենի լիարժեք տառ է՝ շվա-ն չի նշվում որևէ տառով կամ ձայնանիշով, սակայն հստակորեն լսելի է երկու և ավելի բաղաձայններից կազմված կապակցություններում, ինչպես, օրինակ՝ հայերենի «Մ(ը)կ(ը)տիչ» բառում:

Ե.3. Շվա պարունակող բառը ճիշտ արտասանելու համար անհրաժեշտ է յուրացնել, որ շվա-ն առկա է.

- ❖ բառասկզբի երկու բաղաձայնների միջև, օրինակ՝ *ԳըՁա*,
- ❖ բառամիջի երեք բաղաձայններից կազմված կապակցություններում՝ երկրորդ և երրորդ բաղաձայնների միջև՝ *մաԴնըխա, քաԻըրվա* և այլն:


Ե.4. Քարրվա բառի «վ» հնչյունը հուշում է, որ ինչպես այլ ձայնավորներից հետո, շվա-ից հետո ևս երկակի՝ պայթական-շվական արտասանություն ունեցող բաղաձայնները հանդես են գալիս շվական տարբերակով:

Ե.5. Ինչպես և մյուս ձայնավորները, շվա-ն վանկ է կազմում՝ *զը-զա, մադ-ըր-խա, քառ-ըր-վա*: Վանկը ասորերենում չի կարող ունենալ ավելի քան մեկ ձայնավոր և չի կարող սկսվել երկու բաղաձայններով:


¹ Այս առումով ասորերենը համեմատելի է հայերենի հետ, որին նույնպես բնորոշ են անլիաձայնությունը (այդ թվում՝ պատմական) և ը-ով կազմվող գաղտնավանկի ասեկայությունը: Այսպես՝ գրաբարյան «նորա» լիաձայն ձևն աշխարհաբարում վերածվել է անլիաձայն «նրա» ձևի, «բաղանիք» բառը ստացել «բաղնիք» սղված ձայնավորով ձևը և այլն:

ՔԱՖ


Ե.6. Տառի շկապակցված անջատ գրությունն ունի հետևյալ տեսքը.




Քաֆ տառը կապակցվում է երկու կողմից.



կապակցված ձախից՝




կապակցված երկու կողմից՝



Ե.7. Քաֆ տառով նշվում է երկու բաղաձայն՝ պայթական «ք» և շվական «խ»¹: Որպես «ք» այն հնչում է բառասկզբում, ինչպես նաև բառամիջում՝ բաղաձայնից հետո: Այդ դեպքում բեթ-ի վերևում կարող է դրվել կուշշայա՝ փ:

Ե.8. Որպես «խ» քաֆ-ը հնչում է ձայնավորներից հետո (ներառյալ շվա-ն). այդ դեպքում նրա ներքևում կարող է դրվել ոուքքախա՝ փ:

Օրինակներ, ապա արտագրեք՝ փորձելով հնարավորինս ճիշտ վերարտադրել տպագիր տառերը.




¹Ե.3.

¹ Ուշադրություն դարձրեք բեթ և քաֆ տառերի տարբերությանը:
² Բառարաններում, ուսումնական ձեռնարկներում և այլուր քաֆ տառը անջատ գրության փոխարեն հաճախ ներկայացվում է ք կապակցությամբ:
³ Այսպիսով «խ» բաղաձայնն ասորերենում կարող է նշվել երկու տառով՝ խեթ-ով (خ) և քաֆ-ով: Բառասկզբում հնչող «խ»-ն միշտ խեթ է:


ԼԱՄԱԴ

Ե.9. Տառի չկապակցված անջատ գրությունն ունի հետևյալ տեսքը (վերևից ներքև գրվում է աջ գիծը, ապա՝ ներքևից վերև՝ ձախ)։




Լամադ տառը կապակցվում է երկու կողմից.


կապակցված ձախից՝ >



կապակցված երկու կողմից՝ >



կապակցված աջից՝ >



Ե.10. Բառասկզբի ալաֆ-լամադ կապակցությունն ունի հետևյալ տեսքը.



